

մի քանի հայ վաճառական, իրենց հետ առնելով բաբուցի հայ դրամատերեր, բացին «Թիֆլիսի վաճառականական բանկ» (Тифлисский Купеческий банк) կոչուած հաստատութիւնը յիշեալ «Առեւտրական բանկի» ծրագրով, եւ սկսան մրցել այս վերջինի հետ: Այնուհետեւ Պետերբուրգի եւ Մոսկուայի մեծ ուսական բանկերն էլ իրենց ճիւղերը բացին Թիֆլիսում եւ ուրիշ քաղաքներում:

Երբ Մանթաշեանց ամբողջովին նուիրուեց Բաքուի քարիւղի արդիւնաբերութեան, նա բանալ տուեց իր «Առեւտրական բանկին» երկու նոր ճիւղ, մէկը Բաքու, միւսը Բաթում, այն տեղերն, որոնք իր նոր գործունէութեան գլխաւոր կենդրոններն էին: Իր դրամական յարաբերութիւններն այդ ճիւղերի միջոցով էր կատարում, որով կրկնակի օգտուում էր: Հետզհետէ նա աւելի եւս սկսեց տարածել իր ուշադրութիւնը բանկային գործերի վրայ եւ զգալի մասնակցութիւն ունեցաւ Պետերբուրգի երկու մեծ ուսական բանկերի մէջ եւ ընտրուեց նրանց վարչական խորհրդի անդամ, թէեւ շատ քիչ էր յաճախում, այն է՝ միայն երբ կովկասից եւրոպա գնալ գալու ժամանակ, անցնում էր Պետերբուրգից: Այս կերպով նա յայտնի դարձաւ բոլոր դրամատիրական շրջաններին, նախ Ռուսաստանում եւ ապա Եւրոպայում, գլխաւորաբար Պարիզում եւ Լոնդոնում, իբրեւ մեծ դրամատէր եւ «ֆարիւղի արքայ»: Այս կոչումը ձեռք էր, որովհետեւ Մանթաշեանց իր դրամական ոյժն եւ հեղինակութիւնն ամբողջապէս պարտական էր նախապէս արդիւնաբերութեան եւ մեծ դեր էր խաղում դրա մէջ: Հօր մահից յետոյ նա բոլորովին զազարեցրեց Թիֆլիսի առուտունն, որ այլ եւս չէր գոհացնում նրան: Նա պահանջ էր զգում աւելի մեծ, աւելի բազմակողմանի առեւտրական գործունէութեան: Այս գործունէութիւնը նոր գտաւ քարիւղի (pétrole) արդիւնաբերութեան եւ առեւտրի մէջ: Բաքուն՝ իր այս սեւ ու հում ձէթովն, այն մագնիսական ոյժն է եղած, որ երկար տարիներ, բայց առանձնապէս 1880ից սկսած, քաջած է հայ ձեռնարկուններին իր կողմը: Այդ է եղած կովկասի հայոց հարբատութեան գլխաւոր աղբիւրը: Դրա շնորհիւ հազարաւորներ մեծ կարողութեան են տիրացած եւ բերաւորներ՝ շատ ապահով նիւթական վիճակ են ստեղծած իրենց համար: Սրանք էլ իրենց կարգին իրենց նիւթական բարօրութիւնը տարածել են իրենց ընտիկ գաւառներում, որով օգտուել է հայ ժողովրդի զգալի մի մասը: Բացի դրանից կովկասի հայոց տնտեսական ոյժի ամձան հետ գուրնթացաբար աճել են նաեւ այն միջոցներն, որոնք պէտք է վարկ տային մեր ժողովրդի կրթական ու հասարակական պլանային: Այս կերպով Բաքուի կամ առհասարակ քարիւղի շնորհիւ կովկասի հայոց մեծ

մասի թէ՛ տնտեսական եւ թէ՛ մտաւորական մակարդակն է բարձրացել: Ի նկատի ունենալով այս հանդամանքը եւ անհրաժեշտ եմ համարում մի առանձին Գլուխ նուիրել Բաքուի նախապէս արդիւնաբերութեան եւ այնտեղ հայոց ունեցած մասնակցութեանն ու կատարած դերին:

(Շարունակելու:) ՍԱՐՈՒՆՆ



ԵՐԵՄԻԱ ԶԷԼԵՊԻ ՔԵՕՄԻՐՃԵԱՆ
ՅԵՆԵԼՈՒՆԵՐԵՆ ՄԵՍԵՐ
ԺԱՆՈՒՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ա. ԳԼՈՒԽԻՆ

10րդ տողին համար: — Ազգ. Հիւանդանոցի «Ս. Փրկիչ» մատուցը անձամբ օժանդ է 1906ին Մաղաքիա Պատրիարք Օրմանեան: Այս մատուցը քարուկիր է, կոկիկ ու սիրուն, որու ճակատը դրօշմուած է հետեւեալ Յիշատակութիւնը.

«Տաճարս Ս. Փրկչի
Փայտակերտ կառուցաւ գառաչիմն յամին 1833
Ի Հոգեւոյս Պեգնեան Յարութիւն ամիրայէ:
—
Ջարդիս վերստին կառուցաւ ի հիմանց տունս սրբութեան
Ի տեղուոյս գրութեան՝ արդեամբ եւ ծախիւք բարեպաշտն
Տեարց Ագաթանայ եւ Կարապետի հարազատաց Թախտապարանեան
Ի յիշատակ եւ ի հանգիստ հոգւոյ եղբոր իւրեանց Դիոզիմեայ
Վաղաժամ վախճանելոյ յամին 1898, եւ Տեառնագրեցաւ
Յանուն ամենասուրբ Փրկչին ի կաթողիկոսութեան
Տ. Տ. Մկրտչի եւ ի Պատրիարքութեան Տ. Մաղաքիայ. յամին 1906 ՌՅԾԵ»:

Ազգ. Հիւանդանոցի պարտեզը թաղուած են Կիւլպէնկեան ականաւոր բարերարները, Սերոբէ (+ 10 Փետրուար 1886) եւ իւր կիներ՝ Հոփսիմէ (+ 20 Նոյեմբեր 1888): Սարգիս (+ 13 Յունուար 1893) եւ կիներ՝ Տիրուհի (+ 19 Մայիս 1908):

Յովհաննէս (+ 9 Յունուար 1894) եւ կիներ՝ Արաքսի (+ 5 Փետրուար 1894): Տիկին Վերժին Պ. Կիւլպէնկեան (+ 25 Յունուար 1903):

Հոն թաղուած են նաեւ՝ Յովհաննէս Յակոբեան (+ 14 Մարտ 1908) եւ կիներ՝ Երանուհի (+ 3/15 Փետրուար 1922), եւ Ստեփան Սպարթալը (+ 9 Օգոստոս 1918):

Եւ ամենէն վերջն ալ՝ Տոքթ. Դանիէլ Հանրմեան, այն անձնուէր երիտասարդ բժիշկը, որ ապերախտ հիւանդէ մը գնդակահար եղաւ 1922 Մայիս 1ին, Հիւանդանոցէն ո՛չ շա՛տ հեռու եւ չարաչար տաղնապններու մէջ մեռաւ վեց օր յետոյ:

Սխտ փառաւոր եղաւ նահատակ Հայ բժիշկին Յուզարկաւորութիւնը Ազգ. Հիւանդանոցին մէջ. տասնէ աւելի դամբանականներ՝ ամէն լեզուէ, արտասանուեցան անոր զաղաղին շուրջը՝ եւ Կ. Պոլսոյ Հայ բժշկական Միութեան պահանջովովը հէզ Հանրմեանի մարմինը ամփոփեցաւ Ս. Փրկիչ մատուռին ետեւը:

Հանդուցեալին ծնողքը գերեզմանին վրայ կանոնեց շիրիմ մը, արձանազրութեամբ հետեւեալ յուղիչ վերտառութեան, զոր ակնարդժ Տոքթ. Էտ. Շահպաղ բարեկամս եւ Հիւանդանոցին Տնօրէնը՝ Տիար Մ. Այվազեան միաժամանակ յղեցին ինձ 1929 Նոյեմբեր 1ին:

Տոքթ. Դանիէլ Հանրմեան 1891—1922

«Առաւօտ մը Մայիսի երբ բնութիւնը նոր կեանք կը զգենուր, կեանքիդ Մայիսն մէջ՝ դուն հրածեշտ տուիր կեանքին. անգութ ձեռք մը որ վարդիդ գեղն ու բոյրն էր վայելած, կուրօրէն նմից վարդդ, բարունակն ալ միասին:

Կեանքդ գիտութիւն, արիւնդ ալ հուսկ կաթիլ, գոհ բերիր ի սփոփանս մարդուն ցաւին, տանջանքին, արժանիքով բեռնաւոր, դուն ուստին

¹ Իմ Դամբանական հրատարակուած «Ժողովուրդի Ձայն» թերթին մէջ: 1922 Մայիս 10:

եղար նմանակ՝ որ ծանրաբեկ կ'իյնայ բեռին տակ

Իր բերքին 1922 Մայիս 1»:

34 տողին համար: — Նաուր Գարուի հորեմեան — Վառվառեան վարժարաններու հիմնադիրն եղած է՝ Վառդապետ Յովհաննէս Ամիրայ Տատեան²:

Նշանակած եմ արդէն (էջ 203) թէ Նաուր-Գարուի Ս. Յովհաննէս Եկեղեցին առաջին անգամ հաստատուած է³ 1803ին եւ վերաշինուած, 1807ին: Այս վերաշինութեան հարիւրամեակն էր որ ուղուեցաւ տունել 1907ին, եւ այդ առթիւ Ա. Ալպոյաճեան հրատարակեց պատմական խիստ լաւ տեսութիւն մը⁴ նաեւ Եկեղեցիին Արձանագրութիւնը, որ էր հետեւեալը եւ զոր ես ալ անձամբ ընդօրինակած եմ ժամանակին՝ մարմարեայ խոշոր քարի մը վրայէն, որ կը մնար թաղական խորհրդարանին մէջ: Աւասիկ այն նոյնութեամբ, 10 տող եւ բոլորգիր փորագրուած:

«Աստուծոյ անուռն ողորմութեամբն, ի Տեառն Դանիէլի սրբազան կաթողիկոսի Հայրապետութեան եւ ի Տեառն Յովհաննէսի արքեպիսկոպոսի պատրիարքութեան, հրաշափայլ տաճար՝ որ յԱնուն Սրբոյն Յովհաննու Աստուածաբան Աւետարանչի, ի ձեռն ջանից Ազնաւորեան Կարապետ Ամիրայի՝ եւ պաշապիրկեան միւրեվիվելի մահտեփ Յովհաննէս Աղայի, եւ հարամանի Տափեան Նազըր Յովհաննէս աղայի եւ Տիւլպէնտի Պարոն Մկրտչի, եւ Տէր Ղուկաս վարժապետի: Եւս փութի մահտեփ Յարութիւնի: Ոսկերիչ Պարոն Պօղոս, հայրախնի Պարոն Գարբիէլ եւ Պարոն Պօղոս, Պարոն Մեղիքիս եւ Բէրէսթէնի Պարոն Պետրոս՝ Հոգեւտանս հոգեբարձուաց աշխատութեամբ կառուցաւ ի Յիշատակ իւրեանց, եւ համայն Ազգիս ի ՌՄԾԶին (1807)»:

Բայց այս Եկեղեցիէն տարիներ առաջ 1794ին շինուած է կամարակապ քարուկիր

² Տարեցոյց Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի տարի 1901, էջ 232:
³ Պատմ. Ա. Պերպլեանի, էջ 51 եւ 445:
⁴ Բիւզանդիոն, Թիւ 3369, 6 Նոյեմբ. 1907:

այն չէնք, որ այժմ թաղական խորհրդա-
րան է եւ որուն հարաւային պատին վրայ
փորագրուած է 13 տող Արձանագրութիւն
մը սապէս .

է

Յիշատակ է քարաշէն սեն
եակս Արեւելիցի պապայի
որդի մահտեսի Կարապե
տին, եւ կենակցոյն 5
մահտեսի Եղիսաբէթին
եւ իւր որդի մահտեսի
Հայրապետին եւ
համայն ննջեցելոց
եւ կենդանեաց հոգոցն 6
ի 1243 թուին
Յունուարի
Ա .

Հաւանաբար իբրեւ Հիւանդանոց ծա-
ռայեց այս չէնք, մինչեւ որ Պէդճեան Յա-
րութիւն ամիրայ շինեց նոր եւ մեծ մը
Ե՛տեգուէի մէջ :

Նարլը Գարուի հին Հիւանդանոցին կը
մնան մէկ երկու թանկագին յիշատակներ,
զորս ծանօթագրութիւններու մէջ նշանակել
աւելորդ չեմ համարիր :

Առաջինը կոնդակ մ'է գրուած 1789ին
որ Հիւանդանոցին մասնակի մէկ նորոգու-
թիւնը կը պատմէ, եւ զոր ամբողջութեամբ
հրատարակած եմ 1907ին (տես «Արեւելք»,
Թիւ 6527, 27 Յունիս 1907) : Այս կոնդակը
կը պահուի Նարլը Գարուի թաղական
խորհրդարանը :

Երկրորդը՝ Ոտանաւոր մ'է, զոր գտած
եմ ինձ սեպհական Բժշկական Ձեռագիրնե-
րու մէկ հատին մէջ :

1799ին շարադրած է զայն Գէորգ Պա-
րատեցի անուանի գիտունը . չորսական տո-
ղով վեց տուն է այն, զոր թէեւ հրատարա-
կած եմ 1930ի Ազգ . Հիւանդանոցի Տարե-
ցոյցին մէջ, բայց հոս ալ զայն կը յիշատա-
կեմ : Ահաւասիկ՝

Այս է գանձանակ՝ անտէր հիւանդաց,
Յայտըմ նորաչէն՝ յարկի բնակողաց,
Վասրն ձեր կենաց՝ միշտ աղօթողաց,
Եւ ողորմութեան՝ ակրնկալողաց :

5 Այս բանը Բիւզանդիոնի մէջ, Ալոյոյաճեան
կենակցացն գրած է . սխալ ընթերցանութեան ար-
դիւնք զայն կը համարիմ :

6 Այս բանն ալ եղած է՝ հոգոյն, որ ճիշտ չի
կրնար ըլլալ :

Ո՞ր իմ պատուելի՝ եղբարք սիրական,
Սիրով յիշեցէ՛ք՝ զբարբառ սիրական,
Յորժամ մըտանէ՛ք՝ յայս տեղ նուիրական,
Դուք ի միտ բերէ՛ք՝ զայն բան իրական :

Որ մեզ պատուիրէ՛ ըզտես հիւանդաց,
Ըզգարման մերկոց՝ բանտեալ աղքատաց,
Հաց տալ քաղցելոց՝ եւ ջուր ծարաւեաց,
Տեղի պատրաստել՝ անտուն օտարաց :

Այս պատուէր Փրկչին՝ մեր կենարարին,
Յորդորէ ըզմեզ՝ գործել ըզբարին,
Արդ՝ լըսող լերուք՝ մաքուր բերանին,
Որ դուք ժառանգէ՛ք՝ լիով գերանին :

Դանիէլ Բարունի՝ տիրապետ եղեալ,
Յաթոռ Բիւզանդեան՝ պատուով զետեղեալ,
Որ գանձեր բանին՝ տարախով տեղեալ,
Չովացոյց զամէն՝ ծարաւով նեղեալ :

Հաշիւն էր Հայոց՝ հաղար՝ Ե երկհարիւր,
Քառասուն եւ ութ՝ ընդ նոյն համարիւր,
Չոր Բրիտանոս հովիւ՝ փոխան արար իւր,
Յոր Տէր յաւելցէ՛՛ ո՞րչափ է կար իւր :

(Շինեցաւ ի Գէորգէ Կ . Պոլսեցոյ՝ պա-
տուելի կոչեցելոյ :)

Ասոնցմէ զատ կայ նաեւ գթութիւնը եւ
ողորմութիւնը ներկայացնող պատկեր մը, որ
կախուած կը մնայ ցարդ Ազգ . Հիւանդանոցի
զուր . պատկեր՝ որու մասին գրեցի եր-
կարօրէն 1929ի Ազգ . Հիւանդանոցի Տարե-
ցոյցին մէջ (էջ 91) եւ որ կը կրէ 1822
թուականը հետեւեալ Արձանագրութեամբ .

Յիշատակ է Հիւանդանոցիս տնտես Տէր
Ստեփան Քահանային, ՌՄՀԱ :

Նարլը Գարուի Եկեղեցիին մէջ կայ Ձե-
ռագիր անյիշատակարան Աւետարան մը,
որուն Ղուկասու Աւետարանէն անմիջապէս
յետոյ կը կարդանք հետեւեալը նոտրագիր .

«Յիշատակ է Սուրբ Աւետարանս Հիւան-
դանոցիս եւ ի ամին կառուցեալ սուրբ Յո-
հաննէս Աստուածաբան Աւետարանիչ անուն
հրաշափայլ սուրբ Եկեղեցոյս Աստուածա-
գօր, Նազրը՝ գերայարգելի եւ ազնուազարմ
հափամանի լուսահոգի մահտեսի Տափէսի
որդի Յոհաննէս Աղային ի 1809 Ամի Փրկչին

եւ ի Յունուարի սկզբանն : Արդ խնդրէ նա
ինքն ի մաքրափայլ Հարանց Սրբոց՝ զայն
ընթերցմամբ վայելողաց՝ յիշել ի յընդու-
նական ձեռն աղօթս՝ կենդանի եւ հանգու-
ցեալ արիւնակցօքն իւրով հանդերձ, զի եւ
յիշողքի յիշեալ լինիջիք ի Տեառնէ Յիսուսէ
աստ եւ ի հանդերձելուսն եւ երանաւէտ տե-
տաքեան նորա արժանաջիք . Ամէն» :

Սոյն 1809 թուականաւ չնւայցարան ա-
ման մը, որուն վրայ գրուած է՝

«Յիշատակ երեք եղբարցս ոսկերիչ պա-
րոն Մարգարն, պարոն Մեսրոբն, պարոն
Յուսէբն ի դուռն Հիւանդանոցի սուրբ Յո-
հաննէս Եկեղեցուն ի թվին ՌՄՄԸին» :

Կայ եւ Արծաթէ պնակ մը, որուն վրայ
արձանագրուած է՝

«Նալը հափու սուրբ Յոհաննէս Եկե-
ղեցոյն . Բէնկըցի մահտեսի միւրեվէլի յա-
րուքին, Թիւլպէնտի պարոն հայրապետ,
Արամանի պարոն Հայրապետ, Քեմհանի
պարոն Արքաիւս, շինեալ յաւուրս իշխա-
նութեան սցա . յամի Տեառն 1820» :

38—40րդ տողերուն համար : — «Յով-
հաննէս Խուլ» Պատրիարքին վրայ Հ . Գր .
Վ . Գալէմբարեան 1911ին⁷ հրատարակեց
ընդարձակ կենսագրական մը, որով զայն կը
ներկայացնէր՝ իբրեւ հռետոր, աստուածա-
բան, գրագէտ եւ հեղինակ . կը յիշատակէր
այլեւայլ ժամանակներու մէջ Պատրիարքու-
թիւն ըրած ըլլալը, առանց սակայն կարենալ
ցոյց տալու թէ անոր պատրիարքական
պաշտօնավարութիւնները յիշատակելի գոր-
ծերու պատճառ եղած են : Կը յայտնէր ա-
նոր Լեհաստան անցնելը գէպի 1631ին, եւ
հոն թողած աշխատութիւնները, մեծ մա-
սամբ ընդօրինակութիւններ, որոնք են՝
Հայոց Պատմութիւն մը (1631), Պատմու-
թիւն Վարդանայ Երամբի (1631), Աղօթա-
գիրք (1632) եւ ուրիշներ⁸ :

Հ . Գալէմբարեանի սոյն գրուածքէն
կ'ուսանինք, թէ Խուլ Յովհաննէս Պատրիարք
1632էն յետոյ քաջուած է Հոռոմ, ուր խոր
ծերութեան մէջ կ'ընթացէ իր կեանքը 1634

7 Հանդէս Ամսօրեայ, 1911, Յունուար, էջ 2 :
8 Անդ, էջ 18—22 :

Յունիս 13ին, եւ Ս . Մարիամ Եգիպտացի
Եկեղեցիին մէջտեղը թաղուած, ունենալով
վրան շիրիմ մը Հայ-Լատին արձանագրու-
թեամբ, զոր Հ . Գալէմբարեան կը ներ-
կայացնէր ամբողջովին⁹, եւ ես ալ հրատա-
րակեցի զայն յետոյ «Տապանագիրք Պատ-
րիարքացն Կ . Պոլսոյ» աշխատութեանս մէջ¹⁰ :

Նախապէս գրուած ծանօթագրութիւն-
ներու մէջ (էջ 205) ես յայտնած եմ թէ՛
Խուլ Յովհաննէս Պատրիարք վախճանած
պէտք է ըլլայ 1644էն յետոյ, տրուած ըլլա-
լով՝ որ նա այս թուականին դաւանական
թուղթ մը գրած ունի եղեր Ուրբանոս Ըրդ
Պապին¹¹ :

Բայց Տապանագիրէն կ'իմանանք թէ ա-
նոր վախճանը պատահած է 1634ին . արդ՝
1634ին մեռնող մը ի՞նչպէս 1644ին դաւա-
նական թուղթ կրնայ գրած ըլլալ, մանա-
ւանդ՝ երբ կը տեսանք որ նոյն տարի ա-
նոր հետ ուրիշ գրողներ ալ եղած են¹² . այս
թուականներուն ո՞րը պէտք է ընդունիլ
իրբեւ ճիշդ :

60րդ տողին համար : — Սամաթիոյ
Սուրբ Մանասորը թաղին մէջ ընդօրինա-
կուած է, 1645ին Յայսմաւուրք մը, զոր
1879ին տեսած է Գ . Սրուանձտեանց Խար-
բերդի Ավշան գիւղի Ս . Գէորգ Եկեղեցին¹³ :
Այդ Յայսմաւուրքի յիշատակարանին մէջ
գրուած է հետեւեալը .

«Գրեցաւ ի Բիւզանդիա ի մահալլէն
Սուրբ Մանասորու, ի թուականութեան
Հայոց Ռ . Ղ . Գ . (1094 + 551 = 1645) ի թա-
գաւորութեան տանկաց սուրբան Խարաի-
մին, եւ ի Պատրիարքութեան Զ . Եկեղեցեաց
իշխանաց . . . 14» :

Սոյն յիշատակարանին վերջին պարբե-
րութիւնը շատ հետաքրքրական է . այդ
թուականին Կ . Պոլսոյ Հայոց Պատրիարքա-
կան Աթոռին վրայ մասնաւոր Եկեղեցական
մը չէր բազմեր, անոր պաշտօնը կը վարէին
խումբ մը աշխարհականներ Աթոռակալ կամ

9 Հանդէս Ամսօրեայ, 1911, Յունուար, էջ 24 :
10 Բագմալէպ, 1918, էջ 169—186 :
11 Մայր Յուզակ Հայերէն Ձեռագրաց Վիեննայ,
Հ . Տաշեանի, էջ 112 :
12 Անդ :
13 Թորոս Աղբար, Կ . Պոլս 1884, Մասն Բ .
էջ 356 :
14 Անդ :

Տեղակալ յորջորջումով, եւ թէ ինչո՞ւ համար, բաւ թո՛ղ ըլլայ կարգաւ այդ մասին, զիչ մը անդին Ս. Սարգիս Եկեղեցիի մասին դրած յաւելուածներու մէջ:

Սամաթիոյ Սուլու Մանասորի Ս. Գէորգ Եկեղեցիին մէջ 1650ին Հոկտ. 18ին ալ ընդօրինակուած է Սաղմոս մը, որուն զրէն եղած է Ստեփաննոս երէց. այդ Սաղմոսը կը պահուի այժմ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան քով¹⁵:

* * *

Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցիին մէջ ընդօրինակուած են նաեւ ուրիշ Զեռագիրներ, որոնք կը պահուին Բարիզ Bibliothèque nationaleի մէջ եւ կը կրեն 61 եւ 309 թիւերը:

Առաջինը Մաշտոց մ'է եւ ունի Երկու Յիշատակարան, որոնք են.

1.

«Կատարեցաւ կարգ քաղման ձեռամբ յոգնամեղ Կափայեցի հասպէկ հաշատուր լոկ երիցու ի քվին Ռձժի ֓ետրուար ԻԹ, արն շաբաթ, ի մայրաքաղաքս Կոստանդինուպոլիս, առ ոտս Սրբոյն Գէորգայ բազմաչարքար վկայի, ի յիշատակ եւ ի վայելումն Յովսէփ քաջ հոռտորի»:

2.

«Գթուրեամբ եւ Մարդասիրութեամբ էին Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ գիրս, որ կոչի քահանայաքաղ, ի հոյակապ եւ ի հոչակաւոր եւ յարգանքստ մայրաքաղաքս Կոստանդինուպոլիս, առ ոտս սրբոյն Գէորգայ բազմաչարքար նահատակի, որ յայլագգայ բառով Սուլումանասոր կոչի, ձեռամբ մեղաներկ հասպէկ հաշատուր երիցու Կափայեցոյ, ի քուակամութեանս հայկազուն սեռի եւ յարեքական տուարի քան եւ երկու յորեկինի եւ միակ եոթն եւ տասնեկի, ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ սրբազան Կաթողիկոսի եւ Հայոց վերադիրտողի»:

Ինչպէս կ'երեւի սոյն ձեռագրին ընդօրինակելն է՝ Կափայեցի Սաշատուր երէց որ Յովսէփ քաջ հոռտորի մը համար աշխատեցաւ:

¹⁵ Մայր Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վեներիկ յորինեալ է շ. Բարսեղ Վ. Սարգիսեանէ, 1914, Հատոր Ա, էջ 306:

առեթիւն է յանձն առած: Առաջին յիշատակարանին 1117 Հայոց թուականը կը համարուի իսկապէս Քրիստոսի՝ 1668 թուականին: Երկրորդ Յիշատակարանին թուականն ալ նոյնն է:

Երկրորդ Զեռագիրը Պղնձէ քաղաք եւ Նօքն իմաստասէր կոչուած ծանօթ դրուածներն են, զոր 1696ին թարգմանած է Յակոբ Թոխաթեցի. «Ի յերկիրն Իլախաց, ի Լատիքա մարտնոյ պլ լեզուս ի խնդրոյ վարձապետին իմոյ Թոխաթեցի Տէր Յակոբին, ի քուականին հազար վաքսուն երեքին սկսեալ եւ աւարտեալ հազար հարիւր քառասուն եւ հինգ» . այսինքն՝ թարգմանութիւնը՝ 1614ին եւ օրինակութիւնը՝ 1696ին:

Յիշատակարանն է հետեւեալը՝

«Արդ եղեւ սա աւարտեալ, ներ մարմնութեան Փրկչին ՌՁՁԳ (1696), եւ մերում արամագնեայ քուականին ՌձԽԵ (1696) ամին, ամսեանն Գեկտեմբերի, չորրորդում աւուրն Ուրբաթի, ի քաղաքն Կոստանդինեայպոլիս, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգայ գորավարին»:

«Որք ընթեռնուք յիշեցէք ի Տէր զգծող սորին, եւ զծնողսն իմ, եւ առ հասարակ հանգուցելոցն իմ ի Քրիստոս եւ որք յիշէիք յիշեալ լիջիք ի Տեառնէ Աստուծոյն»:

Սամաթիոյ Եկեղեցիին վերջին շինութիւնը յայտնող Արձանագրութիւնը հետեւեալն է՝

«Տախարս Սրբոյն Գէորգայ, հրկիզեալ յամին 1866, ողորմութեամբն Աստուծոյ անդրէն կանգնեցաւ ի հիմանց, ի պատրիարքութեան Ս. Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսի վեհապետեան սկզբնաւորեալ ջանիւք հոգելոյս Պատրիարքին Ս. Տ. Ներսէսի Սրբազան Արքեպիսկոպոսի վարժապետեան, եւ լիաձեռն մասնակցութեամբ երկուց հարազատացն ազգասիրաց Միքայէլի եւ Յովհաննու Յակոբեան, որք պատհառ եղեն շինութեանս, յօժարամիտ նուիրելով գերբարդ մասն ծախուց: Յիշատակ սոցա եւ համայն բարեպաշտ օժանդակողաց եւ աշխատաւորաց եղիցի յաւերժ օրինութեամբ: Յամի Տեառն 1887 Փետր. 8. հարտարապետութեամբ Նեմեղ Պետրոսի. ՌՅԼԵ»:

Այս Եկեղեցիին Քարոզիչ էր՝ 1701ին, Աւետիք Վարդապետ¹⁶, յետոյ Պատրիարք Կ. Պոլսոյ, եւ 1773ին ալ՝ Էջմիածնի նուիրակ կաղզուանցի Զաքարիա Արքեպիսկոպոս (այլա Պատրիարք), որ նախապէս 1768ին՝ իր առաջին նուիրակութեանը Պալատի Ս. Հրեշտակապետ Եկեղեցին քարոզած էր:

Գրած եմ (էջ 218) թէ Սամաթիոյ Եկեղեցիին մահալլէ կամ Ալքը մերմէր կոչուած կողմը կայ հայաքնակ թաղ մը, իր «Գլխադիր Ս. Յակոբ» անուն Եկեղեցիով, որ ունի կրկնան Արձանագրութիւն հետեւեալ կերպով՝

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Սուրբ Տախարս այս, յանուն Գլխադիր Սրբազան Առաքելոյն Յակոբայ, արդեամբ եւ աշխատութեամբ անախնասէր ժողովրդոցս Հայկազնեան. ի Հայրապետութեան Ս. Տ. Մատրէոսի Աստուածընտիր Կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Ս. Յակոբայ ազգասէր Սրբազան Արքեպիսկոպոսի: 1858 Յուլիս 13»:

* * *

«Ի վերջոյ ի հիմանէ կառուցաւ Սուրբ Տախարս այս, նախագահութեամբ Բարսեղ է֓. Ստամպոլուեանի եւ Ազնուաշուք անդամոց Մասնախմբոյ. յերիս մասունս արդեամբ նորին վեհմութեան Բարսեղ է֓. ի եւ մնացեալ մի մասն բարսէր անձանց նուիրատուութեամբ, ի Հայրապետութեան Ս. Տ. Մակարայ վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Ս. Խորենայ Աշըգեան Սրբազան Արքեպիսկոպոսի. 1892 Դակտեմբեր 28»:

67րդ տողին համար: — 1863 Փետրուար 15ին՝ Թորոս Նազարեան ծանօթ Հայկաբանը, Եկեղեցիին մէջ իր անունով բացած է աղջիկներու համար գիշերօթիկ վարժարան մը, որ մէկ ու կէս կամ երկու տարիէն աւելի տեղութիւն չէ՛ ունեցած¹⁷:

¹⁶ Պատմ. Հայոց, Զամչեան, Գ. Հատոր, էջ 732:
¹⁷ Կիլիկիա, Կ. Պոլիս, Գ. շրջան. 1 Յունուար 1863, էջ 91—93:

1884ին հաստատուած է հոն Գարաց ընկերութիւն մը, որ քանի մը տարի արդիւնաւոր դործունէութեամբ ապրելէ յետոյ, դադարած է:

Հոս բնակած է մինչեւ 1804 ազգային մեծ բարերար Գաղէզ Յարութիւն ամիրայ Պէզճեան¹⁸, որ այլա Սուլթանական հրամանով փոխադրուած է Օրթաքիլ, ուր եւ մեռած է 1834ին:

Եկեղեցարուի Առաքելոց-Հայկանուշեան Ազգային երկսեռ վարժարանը, չէնքին շատ հինցած եւ խարխուլ ըլլալուն պատճառաւ, 1907ին փոխադրուած է Եկեղեցիին գէմը Մուրատեանց ընդարձակ տունը, զոր Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի յորդորանքով նորոգեցին ու Ազգին ընծայեցին, հանգուցեալ Գէորգ ազա Մուրատեանի գաւակները:

1875ին Հմայեակ Եպ. Դիմաքեան, վարդապետ եղած ժամանակը Եկեղեցարուի մէջ հաստատած է Հայաստանեայց անուն Տպարան մը, որ կը գտնուէր տունի մը մէջ եւ ուր սովորուած են «Շիք-Մանուկ ի Միջերկրանէ», «Գայլ Վահան», «Աղօթագիրքեր», «Շարական եւ Տօնակարգ»¹⁹: Այս Տպարանը չորս տարի տեւած է, յետոյ նոյն անունով փոխադրուած է Մայր Եկեղեցիին փողոցը, եւ երկու տարի միայն կեանք ունեցած է:

Կ'ըսուի թէ՛ 1847ին Եկեղեցարուի մէջ թատերական հայերէն ներկայացումներ տեղի ունեցած են, բայց չառ վաղանցիկ կերպով²⁰:

Եկեղեցարուի Եկեղեցիին Արձանագրութիւնը հետեւեալս է.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ տախարս այս Սուրբ՝ յանուն Սրբազան Առաքելոցն եւ առաջին լուսաւորչաց մերոց Թադէոսի եւ Բարքողիմէոսի ի Պատրիարքութեան»:

¹⁸ Կենսագրութիւն Յարութիւն Ամիրայի Պէզճեան, Սո. Փափագեան, Կ. Պոլիս, 1864, էջ 113:
¹⁹ Տիպ ու Տառ, Թէոդիկի, էջ 105:
²⁰ Արեւելք, Թիւ 3791, 29 Օգոստոս 1898:

բուքեան Տ. Տ. Մատթէոսի Սրբազան Արքեպիսկոպոսի եւ ազգասէր Պատրիարքի Կ. Պոլսոյ, արքեպիսկոպոսի Աստուածասէր Ժողովրդեան. յամի Փրկչին մերոյ 1846 Յունիս 9»:

71րդ եւ 72րդ տողերուն համար: — Գում-Գարուի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցիին ճակատը կայ հետեւեալ Արձանագրութիւնները.

1.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցան սուրբ Տաճարքս արքեպիսկոպոսի Ազգիա Հայոց ի Պատրիարքեան Տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի: Յամի Տեառն 1828 Հոկտ. 1: Տէր վարձարեացէ աստ եւ ի յարութիւն կենաց գյատուկ պատճառ շինութեան սոցին հանդերձ կենդանեօք եւ ննջեցելովք, եւ գամենայն հոգաբարձու յարգելիան. եւս եւ զհամայն նուիրամատոյց եւ ճրի աշխատաւոր բարեպաշտ ժողովարդս»:

2.

«Պատրիարքեան Աթոռանիստ Մայր Եկեղեցիս Ս. Աստուածածնի կրկին կառուցեալ արքեպիսկոպոսի ազգին գլխաւորութեամբ Յարութիւն Ամիրայի Պէգեմեան ի պատրիարքեան Տ. Տ. Կարապետի Արքեպիսկոպոսի Յամին 1828: Վերստին նորոգեցաւ եւ զեղազարդեցաւ ներքուստ եւ արտաքուստ արքեպիսկոպոսի Մանուկ Էփ. Սմբատեանի առն վաճառականի ի Պատրիարքեան Տ. Տ. Մազաքիա Արքեպիսկոպոսի. Յամին 1902»:

Մայր Եկեղեցիի 1828ի վերաշինութեան Հարիւրամեակը մեծահանդէս տօնուեցաւ 1928ին, եւ այս առթիւ Յակոբ Վարժապետեան հրատարակեց պատմական խիստ հմտալից աշխատութիւն մը²¹:

Պրիմեան Հայրիկ իր պատրիարքութեան ժամանակը, Եկեղեցիին Չանգակատունին ճակատը զետեղել տուաւ խոշոր եւ հնչուն ժամացոյց մը, որ ունի հետեւեալ Արձանագրութիւնը.

²¹ Հարիւրամեայ Յարիկեան վերաշինութեան Մայր Եկեղեցոյն, Գում-Գարուի, Կ. Պոլիս, Տպ. Յովակիմեան, 1928:

«Յիշատակ է ժամացոյցս ժամագործ Կարապետ Յակոբեանէ նուրիքեալ, ձեռամբ Տ. Սուքիաս Քահանայի: Յամի Տեառն 1870»:

Եկեղեցիին բակը կայ Աղբիւր մը որ ունի սա վերաառութիւնը.

«Չափարիա Պատրիարքին գովացուցէ Տէր զնոզին. որ ետ բերել զուրս անգին ի յիշատակ իւր եւ ազգին. յորդորմամբ (ՌՄԽԸ = 1248 + 551 = 1799) Մահտեպի Տէր Չափարի»:

«Իսկ այժմ նորոգեցին զգար յիշատակարանիս արքունի քաշնի պաշի բարեպաշտ վարդան ազայն:

Եւ բարեժառանգ որդիքն Յակոբ եւ Ստեփան ազայք

վասն արեւշատութեան իւրեանց եւ բոլոր պարագայիցն, եւ վասն հոգւոց ննջեցելոց իւրեանց

զորս Տէր վարձարեացէ Յամի Տեառն 1841 Յունուար:

Սարկաւագ Թովմաս գրեաց եւ Գրիգորն փորեաց»:

Ս. Աստուածածնայ Եկեղեցիին մէջ 1671ին գրուած է «Հայր Մաշտոց» մը, զոր Հայկ Աճէմեան ծանօթացուց 1927ին²²: Այդ Մաշտոցին Գրիչը եղած է Աստուածատուր Երէց, ինչպէս կ'աւանդէ անոր Յիշատակարանը որ է.

«Արդ՝ գրեցաւ տառս որ կոչի Հայր Մաշտոց ի քաղաքս Կ. Պոլիս ի դուռն Սուրբ Աստուածածին, ... ի Հայրապետութեան, որ ի Սուրբ Էջմիածինն, Տէր Յակոբ ամենայն Հայոց Կաթողիկոսի: Եւ մերոյ Պատրիարքեան Կ. Պոլսոյ Տէր Ստեփաննոս վարդապետի Մեղրեցոյ. թվկ. ՌՃԻ (1120 + 551 = 1671): Ձեռամբ փծուն եւ անիմատ գրչի Աստուածատուր իրիցի, գոր անուամբ միայն եմ, այլ գործովս՝ ոչ...» Եւ այլն:

Հ. Մինաս Վ. Բժշկեան իւր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» աշխատութեանը մէջ²³, կը յիշատակէ Յայսմաւորք

²² Բազմավէպ, 1927, էջ 142:
²³ Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ 1880, էջ 212:

մը որ 1675ին գրուած է եղեր Կ. Պոլսոյ Ս. Աստուածածնի մէջ, եւ որու մասին կը գրէ՝

«Տեսաք ի Գրիգորուպոլիս յԵկեղեցոյ Սրբոյն Կատարիսէի, Յայսմաւորք բոլորագիր մագաղաթեայ, գրեալ ի Կ. Պոլիս յԵկեղեցոյ Ս. Աստուածածնին, յաւուրս Սուրդան Մահմէտին ի թուին Հայոց ՌՃԻԳ (1675)»:

Այս Ձեռագրին համար, Հ. Մ. Բժշկեան դարձեալ կը գրէ, թէ ընդօրինակութենէն տարիներ յետոյ՝ Պուլկարիոյ Պապա-Տաղի Վարդապետ Եկեղեցիին յիշատակ կը տրուի²⁴ այն եւ գ'ւցէ՝ այս Եկեղեցիէն է որ կը փոխադրուի Գրիգորուպոլիս:

Պէզճեան Յարութիւն ամիրայի 1828ին՝ Մայր Եկեղեցիին մօտ հիմնած Ուսումնարանին մէջ՝ Ակնցի Տէր Պաւղոս վարդապետ Պետրոսեան 1837 թուականին կը շարադրէ «Մանիլեան Անդեղայ» անունով փոքրիկ բայց ընտիր Բժշկարան մը, որ այժմ իմ

²⁴ Անդ, էջ 212 եւ 230: Այս տեղ անկարելոր չեմ համարիր յիշատակել, թէ տարիներ առաջ Կ. Պոլիս, Գում-Գարու զեղազործ Չարիֆեանի քով տեսած եմ ձեռագիր Տրամարանութիւն մը, որուն անհամակերպին էջին վրայ կար Յիշատակարան՝ սապէս.

«Ի Պոզոս դարէ դաստուէ ընծայի Տրամարանութիւնս ի վայել Տիրացու Գրիգոր քաջ Հոնտորի՝ Աշակերտի Տեառն Յովակիմայ հոգեգօծ վարդապետի եւ Արժանաժառանգ Պատրիարքի Սրբոյն Սաղիմայ: Որ եւ օրինակեցաւ գրուիս Տրամարանութեան ի թուին Հայոց ՌՄԻԳ (1775). Սեպտեմբերի 22, ձեռամբ Խոսար Յոնանիսի Պոզոսեան ի Մեծն Պոլիս ի նորակերտ Իպրատան Տեառն Չափարիայ Ազգասէր Պատրիարքի»:

Անշուշտ այս Տրամարանութեան մէջ յիշուած նորակերտ Իպրատանը Մայր Եկեղեցիին մօտն էր, եւ թերեւ նախեան Պատրիարքի 1741ին (էջ 230) հաստատան էր այն, զոր Չաքարիայ Պատրիարք ալ կը վերաբանար: Նիստ կարելոր է այս Յիշատակարանս, որ ո'չ միայն ազգային կրթական յարկերու հաստատութեան մէկ ժամանակը կ'որոշէ այլ եւ՝ կ'ուսուցանէ անունները՝ դաստու Պոզոս Իպիրիմ, քաջ հոնտոր Տիրացու Գրիգորիմ, եւ Պոզոսեան Խոսար Յովաննէսին, որոնք անշուշտ կրթական մշակներ էին:

Այս Տրամարանութիւնը սակայն ունէր Յիշատակարան մ'ալ, որ կը յայտնէր դործին բուն թարգմանիչը եղող անձին անունը, եւ որ կցուած էր վերջերեւելին սապէս.

«Այլ եւ արժան վարկայ գեղուցանել ընթերցաւոր եզրարքս զի գաղափար գրկական էր քարգմանեցալ ի լատին լեզուէ ի Հայ լեզու ի թուին փրկչական ՌՂԵ (1648) աշխատարկութեամբ Արեղայի ուսման Սիրաք անուն ի քաղաքն Բերիս»:

Արդեօք Սիրաք Արեղային ձեռագիրը ո'ւր կը գտնուի:

սեպակահանութիւնս է եւ որուն առաջին երեսին վրայ կը կարդանք հետեւեալ յիշատակարանը՝

«Ձոր մարդասէր խորհրդով եգիտ, եւ բազմապատիկ փորձով վերահասու լիեալ՝ յայս տեսրակ հաւաքեաց եւ ի գիր արձանացոյց յօգուտ հասարակաց.

Տ. Պաւղոս վարդապետ Պետրոսեան Ակնցի ի Պատրիարքեան Տեառն Ստեփաննոսի Անենապատիւ եւ վեհափառ Արքեպիսկոպոսի Պրուսացոյ՝

ի կոստանդնուպոլիս Յուսումնարանն ընդ հովանեալ Աթոռանիստ Մայր Եկեղեցոյ Սուրբ Աստուածածնի 1837 ի 1 Սեպտ.:

Այս Պոզոս վարդապետ Պետրոսեանը բժշկութեան հետամուտ ու սիրահար մէկը եղած է. 1848ին գրած է Բեւեկնի ծառին օգուտները, եւ Արուստ պայտարութեան վերնադրով յօդուածներ, որոնք թէեւ քաղաքային բայց ընտիր պարունակութիւն մը ունին. ատենք հրատարակուած են Բազմավէպի մէջ²⁵:

Մայր Եկեղեցիի առթիւ շարադրած Մանօթագրութիւններու մէջ՝ Ազգային Պատրիարքարանի առաջին յիշութեան թուականը չեմ կրցած որոշակի յայտնել: Կարելոր կը համարեմ ուրեմն ըսել, թէ Ազգ. Պատրիարքարան անունով շա'տ հին ատեններու մէջ առանձին չէնքի մը գոյութիւն ունենալը կասկածելի է եւ երբ 1641էն յետոյ Սամաթիայէն փոխադրուեցաւ այն Գում-Գարու, հարկաւ Մայր Եկեղեցիին շրջափակը գտնուած շէնքերէն մէկին մէջ նախ եղաւ անոր տեղը, մինչեւ որ 1738ին Գրիգոր շրջափակի Պատրիարքը շինեց Երուսաղէմատունը (տե'ս էջ 235), զոր Գրիգոր Պատրիարք Պատմաճեան ալ վերաշինած է 1762—1763:

Կենթադրեմ, որ Երուսաղէմատունը մինչեւ 18րդ դարու սկիզբը ծառայած ըլլայ նաեւ իրրեւ Ազգ. Պատրիարքարան եւ կը թուի ինձ, թէ Ազգ. Պատրիարքարան անունով ճանչցուած մասնաւոր շէնքը կառու-

²⁵ Բազմավէպ, 1848, էջ 46—338: Տիրա Յակոբ վարժապետեան իւր Յորեկնական հրատարակութեանը մէջ կը յիշատակէ (էջ 61—62) թէ Մայր Եկեղեցիին մէջ կը պահուին քանի մը հատ գրչագիր Աւետարան, որոնց ամենահինը կը կրէ 1671 թուականը:

ցուած է, Մայր Եկեղեցիի 1828ի շինութենէն յետոյ, այսինքն՝ արդի Երուսաղէմատունին հետ՝ 1832ին:

Այս 1832ին շինուածը 80 տարի տեւելէն յետոյ վար առնուեցաւ 1912ին, եւ դարձեալ իր տեղը կառուցուեցաւ նորը, հետեւեալ արձանագրութեամբ:

«Պատրիարքարանս Հայոց արդեամբ ազգիս վերստին ի հիմանէ կառուցաւ ի հայրապետութեան Տեառն Ս. Տ. Գեորգայ Ե. ի Սրբազնատուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ Տեառն Յովնանու Ս. Արք. Եպ. Արշարունայ հիմնարկութիւնս եղեւ շինուածոյն յամենն Յուլիսի 1912 ամի Փրկչին»:

Մայր Եկեղեցիի կամ Ազգ. Պատրիարքարանի մէջ տեղի ունեցած ժողովներու շարքին յիշել կարեւոր է եւ այն՝ զոր Չուհաճեան Մատթէոս Պատրիարք գումարած է 1844ին, վասն յիշատակելոյ ի պատարագի զանուն կաթողիկոսին Էջմիածնայ²⁶, եւ անկէ ի վեր այդ յիշատակութիւնը անխափան կը կատարուի ամէն օր եւ ամէն ուրեք:

Կարեւոր է յիշել եւ Ազգ. Գերագոյն ժողովի այն նիստը, որ տեղի ունեցած է 1846ին, եւ որուն մէջ որոշուած է պաշտօնական թերթի մը հրատարակութեանը ձեռնարկել: Այդ թերթը արդարեւ սկսած է «Հայաստան» անունով 1846 Յուլիս 1ին:

որուն յաջորդած է յետոյ «Մասիս» թերթը 1852ին:

Ազգ. Պատրիարքարանի փոփոցը կը կոչուի իր անունով. հոն հաստատուած է 1879—1880 «Հայաստանեայց» Տպարանը փոխադրուելով Եէնիգարուէն, ինչպէս գրած եմ արդէն: Այդ Տպարանը կը վարէր Կ. Ա. Պարոնեան, հոն կը տպագրուէին այն առենի Ազգ. ժողովի Ատենագրութիւնները եւ զանազան Տեղեկագիրներ, ինչպէս նաեւ Հայկական խնդրոյն համար վեց մեծ Տերութիւններուն Դեսպաններուն կողմէ շարագրուած համբաւաւոր մէկ Պահանջագիրը՝ որ յահանջս իւրից բարբառող բան մը եղած է...:

Տեղն է հոս յիշել, թէ Մայր վարժարանի Հոգաբարձութիւնը, երբեմն պատրաստել տուած է աշակերտներուն մրցանակ տալու համար, արծաթ մետաղներ, որոնցմէ հատ մը տեսած ու լուսանկարել տուած եմ եւ զոր կը ներկայացնեմ ահա: Մէկ կողմը շուրջանակի գրուած է՝ «Առաքինութեան եւ ուսումնասիրութեան» մէջ տեղը դարձնել պատկեր մէջ «մրցանակ» բառը եւ ներքեւը «1877 Մարտ 14»: Իսկ միւս էջին վրայ եւ շուրջ բոլորը՝ «Աշակերտելոց Մայր Եկեղեցւոյ վարժարանի Կ. Պոլսոյ», եւ մէջ տեղը՝ Դպրոցը խորհրդանշող շէնք մը: Խիստ հազուագիւտ մետաղ մ'է այս:



Ինչպէս նախագրուեցած էի 240 էջին մէջ, Մայր վարժարանը բանի մը տարի առաջ բոլորովին նոր վերաշինուեցաւ Ա. Էգնայեանի եւ Յովհ. Թավչանճեանի ծախքով ինչպէս կը գրէ Յիշատակարանը որ է՝

«Կառուցաւ ի նորոյ Պեգնեան Մայր վարժարան արդեամբ եւ ծախիւք երկուց երախտագէտ Սանուց եւ Ազնուասիրտ բարերարաց Աթանազիսեայ էգնաբան եւ Յովհաննու Թավչանճեան. նախաձեռնութեամբ եւ ջանիւք նախկին Պատրիարք Ս. Մաղաքիա Արքեպիսկոպոսի յամին 1914 եւ աւար-

²⁶ Պատմ. Հայոց, Ա. Եւսեպ Պէրպէրեանի, էջ 282:

տեցաւ ի Տեղապահութեան Տ. Գեորգայ Արքեպիսկոպոսի 1924 յամենն Դեկտեմբերի»:

Գում-Գարուի դուրսը գտնուած եւ Պէզ-ճեան Յարութիւն ամիրայի կտակով կառուցուած «Ս. Յարութիւն» Եկեղեցիին Արձանագրութիւնն է՝ հետեւեալը:

«Հիմնեցաւ Սուրբ Յարութեան տաճարս, արդար կտակաւ Յարութիւն ամիրայի Պէզ-ճեան եւ աւարտեցաւ արդեամբ ազգիս Հայոց ի Հայրապետութեան Տ. Տ. Ներսիսի Սրբազն կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տեառն Յակոբայ ազգաւոր Արքեպիսկոպոսի. յամի Տեառն 1855 Դեկտ. 14»²⁷:

Իսկ Կէտիկ բաշայի բարձունքը եղած հայաբնակ մեծ թաղին «Ս. Յովնանէս» Եկեղեցիին ունի իր Արձանագրութիւնը սապէս:

«Ողբմութեամբն Աստուծոյ, կառուցաւ Սուրբ Եկեղեցիս յամուն Սրբոյն Յովնանու Աւետարանչի, ի Պատրիարքութեան Տեառն Յակոբայ Արքեպիսկոպոսի յամի Տեառն 1849 ի Դեկտեմբերի 18: Իսկ եւ յետ հրկիզութեան նորոգ շինեցաւ ի Պատրիարքութեան Տեառն Ներսիսի Արքեպիսկոպոսի վարժապետեան ի 1876 Յունիսի 27»:

«Կառուցման եւ նորոգ շինութեան Սուրբ Եկեղեցւոյս, ի փառս միոյն Աստուծոյ անձնուէր պատուառս, նուիրամատոյց եւ ձրի աշխատաւոր բարեպաշտ Ազգայինք՝ վարձատրութեան ի Տեառնէ մնալով յուսալից»²⁷:

75րդ տողին՝ Ս. Սարգիս Եկեղեցիին համար: — Գարեգին Եպ. Սրուանձտեանց իւր «Թորոս Ազրար» աշխատութեանը մէջ (Մասն Բ. էջ 398—399) կը յիշատակէ թէ Արղնիի Բարձրահայեաց վանքը Յայամաւորք մը կայ, ընդօրինակուած Կ. Պոլսոյ Ս. Սարգիս Եկեղեցիին մէջ՝ 1641ին, որու Յիշատակարանը կը յայտնէ թէ ի՞նչ պատճառներով, աշխարհական Տեղակալներ կը վարէին պատրիարքական պաշտօնը, փոխանակ Եկեղեցականի, կարգանք զայն:

²⁷ Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցին, տարի 1901:

«Եւ պատճառ կախանիս հառաչանացս այժմեան ժամանակիս մարմնաւոր եւ փառամոլ Առաջնորդ անուանեալքն որ ոչ ինայելով ի գառինս, այլ գուն գործեալ միշտ ի փողոտել արագին: Եւ եւս այսմ արքայանիստ մայրաքաղաքիս պատրիչ պատրիարքունք անուանեալքն, յաճախեալ ի չարիս, թողլով զփառս դառ ի միոյն Աստուծոյ, եւ... ուսան զգործս... կաշառաւք եւ տոկոսիւք իւրել յերերաց (զպաշտօն), եւ աւր ըստ աւրէ յաւելուլ զընդոսական հարկն, այնչափ եղեւ որ Եկեղեցիք սուրբ մայրաքաղաքիս յետին չուսուութիւն հասեալ, ի տանց եւ յիշատակաց ի զարդուց եւ յայլ զղեստուց կողողտեալ, եւ պարտք Պատրիարքարանին Ձի, զուրուչն հասեալ, այնչափ առեւի եւ գարջ գտան ի տեսիլ ուսմկին, որ մինչ առ կայսրն բողոք կալեալ, եւ զմիտս թագաւորին հաճեցեալ Խէթրի Շէրիֆ ընկալան, թէ ամենեւին... անուն ո՛չ Պատրիկ լիցի եւ ո՛չ ի քաղաքն անդամ մտցի...»²⁸:

Ի՞նչ աստիճան պատուաբեր ?? տողեր են ասոնք այն առենի Պատրիարք եղող Եկեղեցականներու, մանաւանդ Դաւիթ Արեւելցիին, որու մասին կարդալ Ծանօթագրութիւններուս Ա. Մասին 224—225 էջերը:

Դաւիթ Արեւելցիին՝ ինչպէս գրած եմ արդէն, երեք անգամ Պատրիարքութիւն ըրած է ու խայտառակութեամբ միշտ վար առնուած է: 1650 Նոյեմբ. 22ին²⁹ այդ շնորհունակը դարձեալ կը փորձէ Պատրիարք ըլլալ, բայց շուտով կը տապալեն զայն աշխարհական Տեղակալներ եւ իրենց յօժար կամքով 1651ին Պատրիարք կ'ընտրեն Եղիազար Այնթապցիին, որ գործով Կ. Պոլսոյ կը գտնուէր այն ժամանակները³⁰:

Բաւուի Հաւաւ գիւղի Քաղցրահայեաց Ս. Աստուածածնի վանքը կը գտնուի եղեր ձեռագիր Յայամաւորք մը, որուն Յիշատակարանէն կ'ուսանինք, թէ ընդօրինակուած է այն Կ. Պոլսոյ Ս. Սարգիս Եկեղեցիին մէջ 1645ին:

«Գրեալ ի Կ. Պոլիս, ի Ս. Սարգիս քրվին Ռ. Ղ. Դ. (1094 + 551 = 1645). ձեռամբ Ղազարոս Գրչի»³¹:

²⁸ Թորոս Ազրար, Գ. Եպ. Սրուանձտեանց, Մասն Բ, էջ 400—401:
²⁹ Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ժ, էջ 88:
³⁰ Անդ:
³¹ Թորոս Ազրար, Գարեգին Եպ. Սրուանձտեանցի, Մասն Բ, էջ 376:

Արզնիի Բարձրախայեաց Ս. Աստուածածնի վանքն ալ կայ եղեր Յայամաուրք մը դարձեալ Կ. Պոլսոյ Ս. Սարգիս Եկեղեցիին մէջ ընդօրինակուած 1651ին, ձեռամբ Յովհաննէս գրչի³²:

Վենետիկի Մխիթարեանց Վանքին մէջ կայ ձեռագիր Սաղմոս մը, որ 1668ին գրուած է Կ. Պոլսոյ Ս. Սարգիս Եկեղեցին, ինչպէս կը յայտնէ անոր հետեւեալ Յիշատակարանը:

«Ի քագաւորանիստ քաղաքիս Կոստանդինուպոլիսի, ի դրունս Սուրբ Սարգիս Եկեղեցի, ի քվին ՌձժԷ (1117 + 551 = 1668) ձեռամբ աւտանուն Աստուածատուր իրիցի, ի քագաւորութեան իսմայէլացոց Սուլթան Մէհմէտ Խանգի քարտէս» եւն³³:

Կերեւի թէ այս Ս. Սարգիս ունեցած է ուրիշ շատ Ձեռագիրներ, որոնցմէ Երեմիա Չէլչպի Ապրո Չէլչպիի վրայ գրած վիպասանութեանը մէջ կը յիշատակէ Աւետարան մը, որ Գրիստոսի 1251 թուականը կը կրէ եղեր, եւ զոր Կիլիկիոյ Հեթում թագաւորը գրել տուած է եղեր:

Ս. Սարգիս Եկեղեցիին 1658ի (էջ 277) արան-թաւանիչները այս Աւետարանն ալ եկեղեցական շատ մը գոյքերու հետ ծախուել կը հանեն, բայց Ապրո Չէլչպիի գայն տեսնալով կը գնէ եւ չի թողուր որ օտարի ձեռքը այն հասնի, ինչպէս կը պատմէ Երեմիա Չէլչպի իր սա սրտառուչ տողերով:

«Յորոց եւ մին Աւետարան գեղազարդեալ. որ ի գանձուց Կիլիկիոց եկեալ հասեալ, ի Հեթումոյ թագաւորէն յիշատակ լեալ Առ էձ թուականին դրոշմագրեալ:

Արքայեղբայր Յոհաննիսի էր ըստացեալ Եպիսկոպոսըն արք եւ մեծ գերապատուեալ, Անդուստ եկեալ ի սուրբ Սարգիսն էր կայացեալ:

Դիւրաւ գըտեալն նոցուն դիւրեաւ արհամարհեալ:

Ընդ բազում սպասուց եւ գայն ի ծախ էին հանկալ,

³² Անդ, էջ 408:
³³ Մայր Յուլիանի Հայերէն Ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց Վեհափայտի, Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, 1914, Հատոր Ա, էջ 214:

Չոր Չէլչպիին յորժամ տեսեալ զնա խնդացեալ,

Եւ ի ձեռաց իւրոց այլ եւս ումեք չտվեալ. Այլ զգինս նորա յաւել նոցուն էր հատուցեալ,

Ետ նորոգել զթերին լընլով հարստացեալ Եւ զյիշատակ նորուն չքնաղ գերազանցեալ Նուաստութեանս զյիշատակին զոճն հրամայեալ:

Իմս առ նմա եւ խոր սիրով զայն կատարեալ,

Ետակ հարիւր տամբ յաւելի տաղաչափեալ, Տանց նախածովք արՓալիւօք սիրացուցեալ, Պէսպէս բանիւք մտացուածովք եւ տրամատեալ:

Չոր այժմ ասել եւ յերկարել չէ պատշաճեալ: Ի տեսանելն եւ նա սիրով էր հաւանեալ,

Եւ զանուն մեր գրել ի նոյն յոյժ էր հարկեալ:

Չոր աստ միայն իբրու կընիք աստ յիշեցեալ

Թէ բանքն իմ են յայն մատեան վկայ ցուցեալ,

Քառից կողմանց զանունս բերէ յարմարեալ, Թէեւ յաչըս խորիմաստից անճահ հաշուեալ: Երեմիաս Գարանաղեաց Բիւզանդիէ

Եղէ ծանօթ այնմ որ գըրոցս ասի տէր է Բոսեալ ընդ որդիան հոգիածին զմեզ հայրաբար

Ինքն եւ բամբիչն ընկալեալ զմեզ ծընօղաբար

Էառ ի գիրկս ընդ գորովոյն որ անտեսն է Եղեւ տածող ի ծոց սիրոյն որ արժանն է: Մայրն որ երկուց որդուց էր լեալ յոգնափարթամ

Լինել երից զիս համազոյգ կայր ըզձակամ. Իմ երախտեաց ո՞ւր թէ հնար է հատուցի ի յերկու կեանսն ի յԱրարչէն փոխադրեսցի: Այս ի քաղաքս ի նոյն վայրէ գալուստ սորա Հաղար հարիւր եւ տասնեկին թուական Հայկա:

Սոցուն ծառայ տի՛նա որդեակս հոգեսարաս Սոյն շարադրող նոտար չնչին Երեմիաս:

75րդ տողին Ս. Նիկողոսիս համար: — Այս Եկեղեցիին մէջ, ուր 1567ին Տպարան էր հաստատուած (էջ 284), ընդօրինակուած են շատ Ձեռագիրներ, որոնք ցիրուցան եղած են աշխարհիս չորս կողմերը: Ասոնցմէ վեց հատին վրայ միայն,

կրցած եմ հաւաքել ծանօթութիւն եւ ունենալ անոնց Յիշատակարանները, զորս հարկ կը համարիմ գետեղել հոս իրենց ընդօրինակութեան թուականներուն կարգաւ:

Առաջինը՝ Կարապետ մը՝ գրուած 1615ին, որուն Յիշատակարանն է՝

«Գրեցաւ սա ի քուին Հայոց Ռ. Կ. Դ. (1064 + 551 = 1615) ամի, եւ ի ամսեանն Յունիսի, ի կայսերանիստ մեծախամբաւ քաղաքն Կ. Պոլիս, որ այժմ կոչի Ստամպոլ, ի դուռն Սրբոյն Նիկողայոսի սեանչիւզործ Հայրապետին, ի քաղն Վլանկու. ձեռամբ ապիկար եւ անարուեստ գրչիս Սիմէոնի...»:

Այս Ձեռագիրը կը գտնուի եղեր Սեբաստիոյ Ս. Նշան Վանքին մէջ, ինչպէս կը գրէ Թորգոմ Եպ. Գուշակեան³⁴:

Երկրորդը՝ Յայամաուրք մը, որ գրուած է Յակոբ կրօնաւորի մը ձեռքով, Կ. Պոլսոյ, Ս. Նիկողայոս Եկեղեցիին խուցը՝ ՌձԶ (1627) թուին՝ եւ կը պահուի եղեր Նիկոմեդիոյ Օվաճըք գիւղի Եկեղեցիին մէջ, ինչպէս կը կարդանք Տէրոյնց Պատուելիի հրատարակած «Հայաստան» թերթին մէջ (Բ. տարի, Թիւ 12—65, 20 Սեպտ. 1847):

Երրորդը՝ Սաղմոս մը գրուած 1629ին, որ կը գտնուի Վենետիկի Մխիթարեաններուն քով եւ ունի հետեւեալ Յիշատակարանը³⁵:

«Ի Մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս, ի դուռն Սուրբ Նիկողայոսի Ջըրմուսցոյ Հայրապետին, ձեռամբ յագնամեղ եւ անարհեստ գրչի Յակոբայ Լեհացոյ... ի քուականութեան Ռձ եւ Լին (1629), ի քագաւորութեան Տափկաց տղախաւաք Սուլթան Մուրատին» եւ այլն:

Չորրորդը՝ Աւետարան, զոր ձարձեալ ընդօրինակած է վերոյիշեալ Յակոբ Լեհցի (Սարկաւազ) 1645ին, եւ որ կը պահուի Տիւրքիզէնի Համալսարանի Մատենադարանը. անոր Յիշատակարանն է՝

«Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս ընդ հոն»
³⁴ Հանդէս Անսորայ, 1927, էջ 47:
³⁵ Յուլիանի Հայերէն Ձեռագրաց Ս. Վազարի, Վենետիկ, էջ 242:

վանեալ Սուրբ Նիկողայոսի, ի քուաքորութեանս աւսանագեան եւ արեքական տօմարի Ռ. Կ. Դ. (1645), ձեռամբ Յակոբ Սարկաւազի Լեհցոյ, ի յըստոյգ եւ յընտիք օրինակէ, ի խնդրոյ աստուածարեալ եւ հոգեւէր Տէր Սիմոն Արեղային...» եւ այլն³⁶:

Հինգերորդը՝ ձարձեալ Աւետարան ընդօրինակուած 1674ին Յովհաննէս անուն Գահանայէ մը: Այս Աւետարանին Համար Գիւտ Գահանայ Աղանեան գրած է թէ կը գտնուէր Լիմ Անապատ³⁷ եւ ունէր հետեւեալ Յիշատակարանը:

«Եւ արդ՝ ես յետիմս ի կարգաւորաց եւ տրուպս... Յովհաննէս քահանայ, շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս, ի քուականութեան Հայոց ՌձԳ (1123 + 551 = 1674) ամին, ի յարքայանիստ քաղաքն Ըստամբոլ ընդ հովանեալ Սրբոյն Նիկողայոսի եւ այլ Սրբոց որ աստ կան հաւաքեալ, ի հայրապետութեան Տեառն Սրբոյ Աքոռոյն էջմիածնի Յակոբայ Սրբազան Կաթողիկոսի»:

Վեցերորդը՝ սիրուն Աստուածաշունչ մը՝ զոր յիշատակած եմ արդէն 577րդ էջին մէջ, եւ զոր 1681ին մեծանուն Ապրո Չէլչպիին Որդին Մատթէոս Չէլչպի ծախու առնելով նուիրած է եղեր Պալատու Ս. Հրեշտակապետ Եկեղեցիին:

Այս Աստուածաշունչը կը գտնուի այժմ Վենետիկի Մխիթարեանց Վանքը՝ ո՛չ թէ Պալատու Եկեղեցիին Գանձարանը, ինչպէս գրած են Կ. Պոլսոյ Չարգարեան Եղբայրները³⁸:

Սոյն Յիշատակարանները ներկայացնելով՝ կը պարտաւորիմ դիտել տալ, թէ անոնց մէջ Նշանակուած «Ս. Նիկողայոս» Եկեղեցիին քով Վլանկա բառը չգտնուելուն համար, պէտք չէ բնաւ կասկածել թէ մի՞ գուցէ, էտիրնէ-Գարուի Ս. Նիկողայոսն ըլլայ այն, բնաւ երբեք:

³⁶ Atlas zum Katalog der armenischen Handschriften, Tübingen 1907, Բ. Մաս, VI պատկեր:
³⁷ Գիւտն Հայոց Պատմութեան, Գիրք Ժ, էջ 112:
³⁸ Յիշատակարան Հայ Երեւելիներու, Վ. Կ. Գ. Չարգարեան Եղբայր, Կ. Պոլիս, 1911, Հատոր Բ, էջ 268—269:

Այս վերջի Եկեղեցին՝ արդեն 1627ին մոլեռանդ այլազգիներէ քանդուելով, մըզկիթի վերածուած էր, ինչպէս գրած եմ (էջ 342):

Ո՛չ ալ Թօփ-Գարուի Ս. Նիկողայոսն իմանալու է, զի սա կենդրոնէ շատ հեռու եւ անյարմար տեղ մ'էր, կարելի չէր որ հոն երկարաշունչ Ձեռագիրներ ընդօրինակուէին. եւ գիտենք թէ հազիւ փոքրիկ ձեռագիր մը ընդօրինակուած է հոն 1630ին եւ մէջը Թօփ-Ղաքու բառը յիշուած (գլխեւ այս մասին 415—416 էջերու):

109—113րդ տողերուն համար: — Աք Մէլտանի հրատարակին վրայ՝ Սուլթան Մուրատ Գ. (որ տիրած է 1574—1594) իւր մանչ զաւակներուն թրփատութեան հանդէսն ընել տուած է խիստ փառաւոր, որու մասին Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեանի շարադրած (ղեռ ձեռագիր) Օսմ. Պատմութեան մէջ կը կարդանք:

«Ուր լի լինէր բազմութիւնք պարուց խաղուց եւ քատերց՝ գգիշեր եւ ցորեկ գաւորս եւ, եւ երթային ի հարսանիս խախամք Հրէից իւրեանց ալայիւք: Եւ յունաց Պատրիարքն իւրովն ուխտիւք: Եւ մերս Եպիսկոպոս վարդապետն թումա եկեղեցական ուխտիւք. անցանել առաջի քագաւորին, եւ ալօթս առնելով տային՝ զընծայս իւրեանց»:

Սոյն պարբերութեան մէջ յիշուած «Թումա վարդապետ»ը, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Թովմաս Գաղատացին է. Պատրիարք նստած է 1581ին եւ վեց տարուան պաշտօնավարութենէ յետոյ վախճանած է 1587ին: Սոյն թրփատութեան հանդէսը տեղի ունեցած է 1582ին, որովհետեւ Սարգիս զպէր ուրիշ տեղ մ'ալ այս մասին կը գրէ՝

«Թումին Ռ.Ա. (1031 + 551 = 1582) Սուլթան Մուրատն քրիստոսեան հարսնիք արաւ Կ օր որդւոյն Սուլթան Մէհմէտին ի յԱք Մէլտանն: Յայնմ ժամանակին Պատրիարքն էր Եպիսկոպոսն թումայ, որ քահանայիւք գնաց ի հարսանիքն»:

Աք Մէլտանի հրատարակին վրայ կանգուն է վեց հսկայ միւսարեւոյնով այն մեծ մզկիթը, զոր՝ իբր թէ Այս Սոփիայի նմա-

նեցնելու համար շինել տուած է Սուլթան Ահմէտ Ա. (1603—1617): Այս այն Սուլթանն էր՝ որու վեզիրներուն այսինքն՝ Սատրապաններուն շարքին մէջ կը գտնանք անունը վեզիր Խալիլ փաշայի մը, որ Զէյթունցի էր ի Հայ Ազգէ՝ կ'ըսէ, Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան իր Օսմանեան պատմութեան մէջ:

Զէյթունը, քաջարի՝ հերոսներու այդ բեղուն երկիրը, Հայ արծիւներու այդ եզակի բոյնը, ծնուցած էր ուրեմն զաւակ մ'ալ, որ Օսմ. Պերութեան Սատրապա՛ր ըլլալու չափ ձիւքեր, կարողութիւն ունէր. ի՞նչու սակայն թրքացեր էր այդ Զէյթունցի հայը, արդեօք բոնի խաւմացած մը չէ՞ր այն, մանուկ հասակի մէջ իր հայրենիքի ծոցէն դողցուած... ո՞ր գիտէ:

Այս Սալիլ փաշայն Սուլթան Մուստաֆա Ա. ի եւ Սուլթան Օսման Բ. ի ալ վեզիրն եղած է, եւ նշանաւոր գործերով ալ անուանի հանդիսացած:

Սուլթան Մէհմէտ Դ. ի (1648—1692) օրով ալ եղած է վեզիր մը որ կը կոչուէր՝ էրմէնի Սուլէյման քաշա, խիստ նշանաւոր, որուն համար Սարգիս Դպիր կը գրէ՝ թէ էր՝ Հայկազարմ Մալաթեացի:

* * *

117րդ տողին համար: — Այս-Սոփիայի գմբէթին վերաշինող հայ ճարտարապետ Տրդատի յիշատակը մեր արդի սերունդին միտքէն չի հանելու համար, կարեւոր կը համարիմ գրել հոս, ի՞նչ որ աւանդած է մեզ անոր մասին Ստեփաննոս Ասողիկ հայ Պատմագիրը, որ՝ ինչպէս գիտենք, ժամանակակից էր Այս-Սոփիայի 10րդ դարու վերջը կրած ճարտարապետական վերանորոգումին:

Ահաւասիկ այն.

«Եւ զկնի սակաւ աւուրց շարժեցաւ աշխարհն Յունաց ահաւոր դարդամբ, մինչեւ կործանել բազում քաղաքաց եւ գիւղից եւ գաւառաց, եւս առաւել ի Թրակացոց եւ Բիւզանդացոց աշխարհին հանդերձ ծովովն որ ի մէջ նոցա ծածանեալ ծփէր տատանմամբ, մինչեւ ի նոյն ինքն ի քագաւորական քաղաքին Կոստանդնուպոլսի մեծաշուք եւ բազմապայծառ գարդի հրաշատեսիկ սեանց եւ պատկերաց եւ եկեղեցեաց մեծա-

մեծաց կործանեալ փուլանիւր, եւ նոյն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է, հերձանիւր պատումամբ վերուստ ի վայր: Վասն որոյ բազում ջան եղի արհեստաւոր ֆարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ դիպեալ ֆարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի, տայ գորինակ շինուածոյն իմաստուն հանճարով՝ պատրաստեալ զկապարս կազմածոյն եւ սկզբնաւորեալ զշինելն, որ եւ գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»³⁹:

Ասողիկի սոյն տողերը Չամչեան ալ կը յիշէ, եւ այդ մասին օտար հեղինակներու գրածներէն ալ փոփոխութիւններ ընելով կը յաւելու:

«Յաւարտիլ... պատերազմին երեւեցաւ աստղ գիսաւոր նիզակա՛նէ յերկինս յարեւելից կուսէ՝ ի 15 Օգոստոս ամսոյ (990), ի տօնի վերափոխման Սուրբ Աստուծածնին. եւ ապա եղի շարժումն զարեւելի յաշխարհին Թրակացոց եւ Բիւքանացոց, եւ կործանեցան բազում քաղաքք, եւ ի Կ. Պոլիս եւս աւերեցան բազում եկեղեցիք. ընդ որս հերձեալ պատանեցան եւ որմունք Սրբոյն Սոփիայ, եւ մասն ինչ մեծի գմբէթի նորա. որով եւ վտանգեցաւ եկեղեցին. գործեպէտ եւ բազմօք աշխատեցան ֆարտարքն Յունաց ի նորոգել, բայց ո՛չ կարացին: Անդ դիպաւ յայն աւուրսն Տրդատ ֆարտարապետ Հայոց, եւ իւրով հանճարով եցոյց նոցա նկարս, որով կարացին նորոգել զայն վայելուչ եւս»⁴⁰:

Չամչեանէն յետոյ ուրիշ Հայ գրողներ գովութեամբ միշտ յիշատակած են հարազատ Տրդատի զեղարուեստական այս մեծ ճարտարագործութիւնը: Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան իւր Շիրակին մէջ չի մոռնար զայն, եւ Անի քաղաքին Մայր Եկեղեցիին ու Արզնայի Կաթողիկէներուն նկարագրութիւնն ըրած պահուն, հիացումով կը յիշատակէ Տրդատ ճարտարապետը, որուն համար կը յաւելու իսկ, թէ Ս. Սոփիայի գմբէթին վերանորոգութեան համար յատկապէս հրաւիրուած էր Կ. Պոլիս⁴¹:

³⁹ Պատմ. Ստեփաննոսի Ասողկան, Տպ. Կ. Վ. Շահապարեան, Փարիզ 1859, էջ 242:

⁴⁰ Պատմ. Հայոց Չամչեան, Հատոր Բ, էջ 875:

⁴¹ Բազմավէպ, 1856, էջ 314: Տեղագրութիւն Շիրակայ, Հ. Ղ. Վ. Ալիշան, Վենետիկ 1881, էջ 95 եւ 12 եւ 67:

Հ. Ալիշանի տողերը արդարեւ մեծ կշիռ կու տան Տրդատի ճարտարութեան եւ ճարտարապետական համբաւին, աւասիկ անոնք.

«Վարպետն այն շինող կաթողիկէին եւ նմանեացն ի Հայս եւ կանգնող կոնաճե գմբէթաց՝ Տրդատ, հրաւիրեալ լինէր ի Կոստանդնուպոլիս կարկատել եւ գեղակապ բոլորածաւալ գմբէթն Ս. Սոփիայ, որում ո՛չ լինէին ձեռնաս յայնժամ բիւզանդիկ ֆարտարքն Յունաց»:

Տրդատի արուեստագիտական տաղանդին շնորհիւ Քրիստոսի 10րդ դարէն ի վեր, անխախտ մնացած է Այս Սոփիայի գմբէթը, որ Եւրոպացի հազարաւոր այցելուներու սքանչացումին միշտ առարկայ է, մոռացութեան մատնելով սակայն իրեն վերակենդանութեանը պատճառ եղող Հայ անուն մը մեծափառ⁴²:

Ս. Սոփիայի Եկեղեցիին համբաւաւոր Մատենադարանին մէջ էր՝ որ ութերորդ դարու մատենագիր Ստեփաննոս Սիւնեցին աշխատած ու պարապած է շատ մը ուսումնասիրութիւններով եւ թարգմանութիւններ ընծայած իւր Ազգին⁴³: 11րդ դարու մէջ ալ՝ 1044ին հոն եկաւ Հայ մեծ գիտուն մը, Գրիգոր Մաղիտարոս, որուն համար գրուած է թէ «Յամբիոնն նստեր ընդ իմաստունսն ի ի մէջ Սրբոյն Սոփիայ»⁴⁴: Հոն 1048ին եկած է նաեւ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը, որուն հետ կային ուրիշ վարդապետներ⁴⁵:

Կարեւոր է մեզ գիտնալ, թէ փրկչական 909 թուին Աւետարան մը «ի ձեռն թուրայելի» գրուած է Կ. Պոլսոյ մէջ, յայտնի չէ սակայն թէ մայրաքաղաքին ո՞ր կողմը: Այս Աւետարանէն պատահիկ մը միայն ծանօթացուցած է մեզ Սալիլ վարդապետ Դադեան, հրատարակելով նաեւ անոր Յիշատակարանը որ է՝

⁴² Առձեռն Բաւարան Յատուկ անուանց, Նշան ծիփանեանի, Կ. Պոլիս, Տպ. Մարգարեան, 1879: Մասն երկրորդ, էջ 199: Հայ կայսերք Բիւզանդիոնի, Հ. Տէր Սահակեանի, Վենետիկ 1905, Հատոր Բ, էջ 270—271:

⁴³ Չամչեան Պատմ. Հայոց, Հատոր Բ, էջ 399:

⁴⁴ Անդ, Հատոր Բ, էջ 927:

⁴⁵ Անդ, Հատոր Բ, էջ 944:

«... զբաղձանս ներանձնա
ցեալ ունախոհի եւ մտա
հարուստ ընթերցասիր
ական ուշմագունի եւ
մեծասքանչ անուն
Հայոց սպայապետի
առնելով վսեմափառ
եւ հրաշարդեալ աստուած
ավայելուչ եւ քրիստոսասէր
թեան Աշոտոյ իբրեւ
զբարբիովն ներըն
ծայեաց գշորից աւե
տարանչացն զարտա
ճառութիւնսն ի մի
հաւաքելով առ ի յիշա
տակ ստացաւորին եւ ըն
ծայացելուն ՅՄԸ (թուականութեանն)
Հայոց. հրամանաւ Տեան
Աշոտոյ. գրեցաւ սուրբ
աւետարանս ի Կոստան(դիանոպոլիս ի ձեռն)
Թուֆայէլի ծառայի
ծառային քրիստոսի տեան Աշոտոյ:
Բրիստոսի Աստուծոյն մերոյ փառք յաւի-
տեան»⁴⁶:

Յիշատակարանին մէջ յիշուած Աշոտը,
Բագրատունի թագաւոր Սրբատեան Աշոտն
էր: Սա 888 թուին գացած է Կ. Պոլիս, իբր
հիւր Լեւոն Զ. իմաստասէր կայսեր, որ գե-
տենք թէ Արշակունեաց ընտանիքէն էր⁴⁷:
Կերեւի թէ Աշոտ Կ. Պոլիս գտնուած
միջոցին Թուֆայէլի յանձնարարած պէտք է
ըլլայ օրինակել Աւետարանը, զոր գրելը
կատարուէ 909ին: Աշոտ թագաւոր այդ Աւե-
տարանը չէ կրցած վայելել զի Կ. Պոլսէն
վերադարձէն յետոյ տարի մը չանցած կը
վախճանի 889ին⁴⁸:

Այս Աւետարանը՝ ըստ Խ. Վ. Գաղեանի
Ջիւանչիլիի գաւառի Մեծ Շէն գիւղի պատ-
կան եղած է. եւ վերոյիշեալ Պատարիկը ա-
նոր մէջին պնդուած: Գիրք բոլորածեւ՝
երկաթագիր է մագաղաթի վրայ:

⁴⁶ Այս Յիշատակարանը հրատարակուած է ի
«Յուդակ Ձեռագրաց Խաչիկ վարդապետի Գաղեան»,
Վաղարշապատ 1898, Բ, 28. եւ նաեւ ի Քարսէզ Հայ
Հնագրութեան, Գարեգին վարդապետի Յ. Յալսե-
փեան, Վաղարշապատ 1913, էջ 23, եւ Լուսանկաւր
Տախտակ ԺԶ:
⁴⁷ Պատմ. Յովհաննու Կաթողիկոսի, Երուսա-
ղէմ 1867, էջ 179—181. եւ Պատմ. Հայոց Չամչեան,
Հատոր Բ, էջ 706:
⁴⁸ Անդ:

ԳԼՈՒԽ Գ.

59 եւ 60 տողերուն համար: — Այս տեղ
յիշուած Եօթը Պատրիարքներուն Չորրորդը՝
Թօփալ Յոհաննէս որ 1674—1675 վաղանցիկ
Պատրիարքութիւն մը ըրած է, վախճանած
է եղբր Բասրայի մէջ 1684 Յուլիս 12ին եւ
թաղուած, տեղւոյն Լատին Գերեզմանա-
տունը, վասն զի իւր հիւանդութեանը վեր-
ջին վայրկեաններուն փոխած է եղբր իւր
զաւանթիւնը, ինչպէս կը տեղեկացնէր
1927ին Ներսէս Վ. Սայեղեան⁴⁹:

201րդ տողին համար: — Պալաթի Ս.
Հրեշտակապետ Եկեղեցիին 1692ի Երկրորդ
չինութեան պատմութեանը մէջ (էջ 316) կը
յիշուի՝ իբր Կ. Պոլսոյ Պատրիարք՝ «Տէր
Մատթէոս Սարը կոչեցեալ»։ այս Պատ-
րիարքը նախապէս Միսի ապօրինաւոր Կա-
թողիկոս եղած է. անոր մասին թէեւ խօսած
եմ արդէն էջ 246, բայց այս տեղ ալ հարկ
կը համարիմ ըսել՝ թէ Սարգիս Դպիր Սա-
րաֆ Յովհաննէսեանի ձեռագիր մէկ աշխա-
տութեանը մէջ գտած եմ սա տողերը՝

«Լասիտէնի Կաթողիկոսն սըսայ Սարը
կոչեցեալ, որ կախելոց էին քրքացաւ Հայոց
ք. Ռձնե. Յունիսի Ե օրն շաբաթ (1696)»:

Հ. Միքայէլ Չամչեան անոր համար
«անկեալ ի հաւատոց» գրած է (Հատոր Գ.
էջ 753), իսկ Հ. Ղեւոնդ Ալիշան կ'ըսէ իւր
Միսուանին մէջ (էջ 218) «դեղեւեալն ի հա-
ւատս յերկիւղէ պանման, ի ժամանակի
նահատակութեան Տեան Կոմիտասայ»:

Ս. Հրեշտակապետի 1730ին երրորդ ան-
գամի վերաչինութեան Յիշատակարանը (էջ
314) մեզ կը նշանակէ՝ Մարագէ Օղլու Տէր
Կարապետ անուն քահանայ մը՝ իբրեւ մեծա-
վաստակ աշխատող այդ շինութեան եւ կը
յաւելուի թէ «էր նա այր գործունեայ եւ փո-
խանորդ Աւագերիցուն Պալի օղլու Տէր Կա-
րապետին»։ Այս Տէր Կարապետը որ կ'երեւի
նշանաւոր քահանայ մ'էր, թաղուած է
էտիրնէ Գարուի Գերեզմանատունը, ունի
իւր Տապանաքարը զոր գտած եմ 1914ին եւ
ընդօրինակած եմ անոր արձանագրութիւնը
բաղկացած 11 տողէ ստպէս.

⁴⁹ Հանդէս Ամսօրեայ, 1927, էջ 334:

Այս է Տապան
Հանգստեան
Պալի օղլու
Տէր Կարապետ
Քահանայի
որ հանգեաւ
1744
իսկ ի Հայոց
ՌձՂԳ

Յորմէ առայ առ յոր եղայ ի ներքոյ
Այսօր էր իմ այնպէս եւ է վաղն քոյ»:

Ս. Հրեշտակապետ Եկեղեցիին այժմեան
Արձանագրութիւնը հետեւեալն է.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ
Սուրբ տաճարս
Արդեամբ Ազգիս Հայոց ի Պատրիարքութեան
Տեան Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի
Յամի Տեան 1835 Սեպտեմբեր 7»:

1659ին Մարտիրոս Պատրիարք էտիր-
նէէն դարձին իջեւանած է Պալաթի Եկեղե-
ցին եւ քարոզ խօսած, ո'չ թէ սակայն ունկըն-
դիր ժողովուրդին հողեկան կազդոյր ջամ-
փելու, այլ զայն կեղեքելու համար⁵⁰:

1764 թուին Ս. Հրեշտակապետի մօտ
ապրած է Մելիքիւղէկ բանասէր մը, որ
յիշուած է Տիւրքիզէնի Համալսարանի Հայ
Ձեռագիրներու ցուցակին մէջ ստպէս⁵¹:

Գեորգ Պալատեցի անուանի դիտունը
1781ին էջմիածին է գացած, ինչպէս կ'իմա-
նանք Շահաթունեանցի ժամանակագրու-
թենէն, զոր կ'ընդօրինէ Գիւտ Քահանայ
Աղանեանց⁵² հետեւեալ կերպով.

«ՌՄԼ (1781), 1781 Մայիս 2. Տիրացու
Գեորգ պատուելի այր գգօն հմուտ բազում
լեզուաց էլեալ ի Կ. Պոլսոյ գնաց ի Ս. Էջ-
միածին»:

«ՌՄԼԱ 1782 Յունիս 23, Տիրացու Գեորգ
պատուելի դարձ արար ի Ս. Էջմիածին ի
Կ. Պոլիս»:

⁵⁰ Չամչեան Պատմ. Հայոց, Հատոր Գ, էջ 686:
⁵¹ Katalog der armenischen Hand-
schriften, Tübingen 1907, Մասն Ա, էջ 61:
⁵² Գիւտ Հայոց Պատմութեան, Գիրք Ժ, էջ 462:

ԳԼՈՒԽ Գ.

40րդ տողին համար: — էջ 334 գրած եմ
թէ՝ էտիրնէ Գարուի Գերեզմանատունը
թաղուած է՝ Ռափայէլ Պատկեթեան, եւ յի-
շատակած եմ Տապանագիրն ալ, ուրկէ կ'ի-
մանանք՝ որ նա մեռած է 1763ին:

Սակայն Գիւտ Քահանայ Աղանեանց իբր
«Գիւտ Հայոց Պատմութեան» աշխատու-
թեանը մէջ (Գիրք Ժ. էջ 461), Յովհաննէս
Եպիսկոպոս Շահաթունեանցի ժամանա-
կագրութեանն առնելով կը նշանակէ՝ թէ այս
Պատկեթեան Ռափայէլը վախճանած է,
ՌՄԻԹ (1780), Յունուար 27ին, ինչ որ
քնաւ չի համաձայնիր Տապանագրին ցոյց
տուած թուականին:

Վերջին եւ առաջին թուականներուն
միջեւ ճիշդ 17 տարուան տարբերութիւն մը
կայ. անպատճառ Շահաթունեանց սխալ
աղբիւրէ քաղած է իր տեղեկութիւնը եւ
Աղանեանց ալ հետեւած անոր:

45րդ տողին համար: — Գարակէօմբիւկի
Ս. Յովհան Ոսկեթերան (այժմ այրացաւեր)
Եկեղեցիին 1847ի վերաշինութեան հիմնար-
կէքը տեղի ունեցած է՝ նոյն տարուոյ Յու-
լիսի 13ին, Պալաթի քարոզիչ Գրիգորիս
վարդապետին միջոցաւ: Ճարտարապետն
եղած է՝ Մինաս Չէրքէզեան⁵³: Եկեղեցիին
օծումը Մատթէոս Պատրիարք ինքը անձամբ
կատարած է 1847 Նոյեմբեր 16ին⁵⁴: Արձա-
նագրութիւնն էր՝

«Նորոգ կառուցաւ հրաշագործ Սուրբ
Եկեղեցիս յանուն Սրբոյն Յոհաննու Ոսկեթե-
րանի ի Խարակէօմբիւկ, ի Պատրիարքու-
թեան ամենապատիւ Տ. Մատթէոսի Սրբա-
գան Արքեպիսկոպոսի, եւ ազգայնամ յար-
գելեաց եւ ժրագան աշխատասիրութեամբ
Միքէլիլի Արզուման աղայի, եւ հոգա-
բարձուաց եւ համայն ժողովրդոց»:

Գարակէօմբիւկի Եկեղեցիին հետ յիշա-
տակած եմ (էջ 341) Սարմաթօմբուք թաղին
մօտերը երբեմն գտնուած Ս. Նիկողայոս
Եկեղեցիին որ աւելի՛ կ'օմբուկի Սուրբ Նիկո-

⁵³ Հայաստան, Կ. Պոլիս Բ. տարի, Թիւ 3—56,
19 Յունիս 1847:
⁵⁴ Անդ, Բ. տարի, Թիւ 21—74, 22 Նոյեմբեր
1847:

դու անունով էր ճանչցուած. ստոր մասին գրած տեղեկութիւններս մեծ մասամբ քաղած եմ, ինչպէս քանիցս յայտարարած եմ, Գրիգոր Դարանաղցի ժամանակագրութիւնէն: Այս տեղ հարկ կը համարիմ գրել թէ Դարանաղցիին այս գործը Ծանօթագրութիւններու Ա. մասին երեւացած ատենը, զեռ ձեռագիր կը պահուէր Երուսաղէմի վանքը, բայց 1915ին Մեսրոպ Ծ. Վ. Նշանեան (այժմ Եպիսկոպոս) խնամոտ ուսումնասիրութեամբ՝ զայն ամբողջովին հրատարակեց, այդու՛ մեծ ու մեծ պակաս մը լրացնելով Հայ բանասիրական մարզին մէջ⁵⁵:

Դարանաղցիին կը յիշէ Կէօմրիւկի Ս. Նիկողայոս Եկեղեցւոյ աւագ քահանայն. Հ. Ն. Ակինեան կը նոյնացնէ այս անձը Նիկողայոս Ստամպոլցիին հետ, որ եղած է առաջին Պոլսահայ հեղինակ բանաստեղծը: Հ. Ակինեանի ուսումնասիրութիւնը լոյս պիտի տեսնէ Ա. Չօպանեանի Անախիտի մէջ: 149րդ տողին համար: — Հոս յիշուած Տէր Մինաս նահատակուած Քահանային վրայ Երեմիա Չէլչպի շարագրած է Տաղ մը, զոր զետեղած եմ Երեմիայի կենսագրութեան յաւելուածին մէջ:

162րդ տողին համար: — Հոս՝ Երեմիայի գրածը որ կ'ըսէ՝

«Թլկուրանցի Նիկուրի՝ աշակերտն Կրպօ Թուկուրան»

Երկրիմի է. առաջին ակնարկով ընդունած եմ ես (էջ 382) թէ Կարապետ Թուկուրանցիին աշակերտն էր՝ Նիկողոս Թուկուրանցիին, մինչդեռ հետզհետէ դտած տեղեկութիւններս հակառակը ինձ ցոյց տուին, այսինքն՝ Նիկողոս Թուկուրանցիին է որ աշակերտ եղած է Կարապետ Թուկուրանցիին, ո՛չ թէ սա անոր:

Հ. Ներսէս Ակինեան, գրած է Ղազար Թոխաթեցիին վրայ հմտալից ուսումնասիրութիւն մը, որուն մէջ՝ Գր. Դարանաղցիի ժամանակագրութեանէն քաղելով կը նշանակէ՝ թէ «Կարապետ Թուկուրանցի վախճանած է ի Լեհաց աշխարհին ի քուրին

⁵⁵ Ժամանակագրութիւն Գր. Դարանաղցւոյ, Երուսաղէմ, Տպարան Ս. Յակովբեանց 1915:

Ռ.ԾՁ» (1056 + 551 = 1607)⁵⁶. Եւ Վիեննայի վանքի Ձեռագիրներու ցուցակին մէջ գտնուած Յիշատակարանէ մ'ալ կ'իմանանք որ Նիկողոս Թուկուրանցիին տակաւին կ'ապրէր՝ 1668ին⁵⁷, որով յայտնի կ'ըլլայ իւր աշակերտութիւնը առ իւր Հայրենակից վարդապետին:

Ինչպէս գրած եմ (էջ 382) Թլկուրանցի Նիկողոսի անունը կը կարգանք Վիեննայի վանքը գտնուած Սարգիս-Գիրք ձեռագրին մէջ ստույգն՝

«Ես Նիկողայոս վարդապետս Թուկուրանցի ստացայ գգիրքս այս ի քաղաքն Ուրհայ, եւ իմ քարոզութեամբս ժողովեցի ի ի քրիստոնէից եւ առի գգիրս գայս. Աստուած շէն պահէ Ուրհայոյ ժողովուրդն, այսուհետեւ ո՛չ ոք ի վախ չունի. Եղեք վին Ռձժէ (1668): Աստուած ողորմի ասացէք. Մարիամին հոգուն, որ ետուր Թուկուրանցի. Աստուած ողորմի ասացէք Մարթային, որ ետուր Գուկի իւր հոգոյն եւ ննջեցելոցն»⁵⁸:

Կ'երեւի թէ Նիկողոս Թուկուրանցի 1668էն յետոյ դարձեալ եկած է Կ. Պոլիս, եւ հոն վախճանած ու թաղուած Պալքըլըի Գերեզմանատունը, ինչպէս կը յիշէ Երեմիա Չէլչպի:

Կարապետ վարդապետ Թուկուրանցիի գալով՝ Հ. Ներսէս Ակինեան իւր վերոյիշեալ աշխատութեանը մէջ կը գրէ՝

«Ծագմամբ Թուկուրանցի էր եւ աշակերտած Պետրոս Կարկառեցւոյ. Գր. Դարանաղցի (էջ 352) կը հաղորդէ իր մասին կարեւոր տողերս, երբ կը խօսի Պետրոս Կարկառեցւոյ գործունէութեան վրայ. «Եւ գնացին ընդ հոչակ նորուն բաղմութիւն աշակերտաց որպէս մեծ Կարապետն Թուկուրանցի, որ յետոյ երեկ յԵրզնկան, առաջնորդ նատուրիւ տարի ի Տիրաշէն, որ Ղուկից կատարութեան ժամանակին էր, որ զայն կողմանց վանորայք թալանեցին եւ զամենայն սրբութիւնքս, զխաչերն, զուրջատնին եւ զամեն

⁵⁶ Ժամանակագրութիւն Գր. Դարանաղցւոյ, Երուսաղէմ 1915, էջ 352 եւ Հանդէս Ամսօրեայ, 1921, էջ 575—577, նաեւ Հինգ պանդոխտ Տաղասացներ. Հ. Ներսէս Ակինեանի, Վիեննա 1928, էջ 208—212:
⁵⁷ Մայր Յուցակ Ձեռագրաց, Վիեննա, 750—753:
⁵⁸ Անդ:

նայն կահք սրբութեանցն, սա գրաց եւ ազահաց մեծ Ղուկ աղատուն եւ զամենայն որոնեալ գտին եւ ետուն. եւ յետ այսորիկ զնաց ի Լեհաց աշխարհն եւ անդ վախճանեցաւ ի Թուրն ՌձՁ (1607)»:

Ուսեալ եւ հմուտ վարդապետ մ'էր սա կը գրէ Հ. Ակինեան եւ հասուցած է եղեր շատ աշակերտներ⁵⁹:

Ծանօթագրութիւններու մէջ քանիցս յիշած եմ (էջ 183, 284, 344, 389) ձէվահիրճեան Մաղաքիա Գալիբը, որ Երեմիա Չէլչպիի վերջ երեւելի եղած է իբրեւ ժամանակագիր եւ պատմագիր, եւ նոյն իսկ իր քովը պահած է անոր շատ մը ձեռագիր աշխատութիւնները, որոնք վոխագրուած են սպա Վենետիկի վանքը:

Մաղաքիա ձէվահիրճեան գրած է 1713ին «Գաւազանագիրք Կարողիկոսացն Հայոց» աշխատութիւն մը՝ որ կը գտնուի Ս. Ղազար եւ զոր 1753ին ընդօրինակած է իր աղջիկն Սողոմոն:

Թղթատեցի զայն ես 1923ին երբ վենետիկ էի. ժամանակագրական լաւ տեղեկութիւններ կան մէջը, մանաւանդ կարգ մը հայ նահատակներու անունները, զորս կը ներկայացնէր, գրելով՝

1652 Օգոստոս 20: Խաչատուր մանուկն նահատակեցին յԱմիք:

1655 զԱրիստակէսն կախեցին ի Ստամպոլ:

1655 զՍիրուն անուն մանուկն նահատակեցին սոխտայքն ի վան:

1656 զՄիսիքարն նահատակեցին սոխտայքն ի վան:

1657 զՊետրոս երէցն քրատեցին յՕվանուֆ:

1672 զԽուտիկ օղուն քարկոծեցին ի Կարին:

1676 Գր. Տաքեւացի մանուկ տիօֆ եկեալ ի Ս. Կարապետ Մշու յուխտ, եւ անտ ի քրդաց եւ ի տանկաց հարաւ ի հարուածս մեծամեծս, եւ սպա հատին զգլուխն, որ քոնեալ ի բաց բարբառէր ատանց անձինն:

Ասոնց վրայ մանրամասնութիւններ չի տար ձէվահիրճեան. բայց զարմանալի է որ

⁵⁹ Հինգ պանդոխտ Տաղասացներ, Վիեննա, էջ 208—212:

նահատակներու վերջինը անուանակից է մեր Տաթեւացի մեծ Մատենագրին:

219րդ տողին համար: — Մաքրիֆէոյի (այժմ Պաքրիֆէոյ) Ս. Աստուածածին Եկեղեցիին շինութեանը համար Տերոյնց պատուելի՝ իր Հայաստան թերթին մէջ գրած է, թէ աւարտած է այն 1848ին եւ օծումն ալ տեղի ունեցած է նոյն տարին⁶⁰. բայց անոր բուն հիմնարկէքը 1844ին է ինչպէս կ'աւանդէ Արձանագրութիւնը որ է՝

«Կառուցաւ յանուն Ծնունդ Ս. Աստուածածնայ Եկեղեցին, արդիամբ Տատեան Ազնուազարմ Յովհաննէս պէյի, Յամի Տեառն 1844 Ապրիլ 7:

226րդ տողին համար: — Այ Ստեփանօ Վիւրի Ս. Ստեփաննոս Եկեղեցին ունի հետեւեալ Արձանագրութիւնը.

«Ողորմութեամբ Տեառն Աստուծոյ կառուցաւ տաճարս յանուն Սրբոյն Ստեփաննոսի նախնայի, յատուկ ջանիւք եւ արդեամբք հանգուցեալ Սիմոնի Առաքելի Տատեան յամի Տեառն 1826, զոր վերստին նորոգ շինութեամբն ի հիմանէ պայծառացոյց նորին բարեժառանգ եւ մեծախառտ ազգաւոր որդի Արքունի վառօրապետ Պօղոս Սիմոն Տատեան ի յիշատակ իւր եւ նախնեաց իւրոց, յամի Տեառն 1843»:

Բայց օծումը տեղի ունեցած է 1844ին. Մաքրի վիւրի Եկեղեցիին օծումէն թիւ վերջը:

ԳԼՈՒԽ Ե.

5րդ տողին համար: — «Թօփ-Գարու»ի դոան ներքը գտնուած (էջ 414—415) ու 1832ին վերաշինուած Ս. Նիկողայոս Եկեղեցիին ճակատը գտնուած արդի Արձանագրութիւնը հետեւեալն է.

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ Սուրբ Տաճար արդեամբք Ազգիս Հայոց ի

⁶⁰ Հայաստան, Կ. Պոլիս, Բ. տարի, Թիւ 47—100, 22 Մայիս 1848:

Հայրապետութեան Ս. Տ. Եփրեմայ Սրբա-
 գան Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան
 Կ. Պոլսոյ Ս. Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի
 յամի Տեառն 1832 Յունիսի 4 ի փառս Աս-
 տուծոյ անձնուէր պատմաւ շինութեան
 նուիրամատոյց եւ ձրիաշխատ ազգային ֆու
 մնալով յուսալից վարձատրութեան ի
 Տեառնէ՛ 61»:


132րդ տողին համար: — էյուլի թա-
 դին կրկին Եկեղեցներուն միայն առաջինը՝
 (էջ 420) Ս. Եղիան ունի Արձանագրութիւն,
 որ է՝

«Ողորմութեամբն Աստուծոյ վայելչա-
 գեղ կառուցաւ Եկեղեցին Սրբոյն Եղիայի
 Մարգարէն ի Պատրիարքութեան Տեառն
 Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի, յարդեանց
 միայն հարագատ քեռ Քրիստոսագոր Յա-
 րութիւն Ամիրայի Պէգնեան, Բարեպաշ-
 տուհի Համասիւտ Տիկնոյ եւ պայծառածին
 գաւակաց նորա, Նշան, Պողոս, Սարգիս եւ
 Յովհաննէս Զէլէպեան եւ Մարիամ Օրիոր-
 դին ի յիշատակ ինքեանց եւ Ազգատոհմի
 իրեանց, գորս Տէր վարձատրեացէ յաշ-
 խարիի աստ եւ յարձայութեան իրում
 ամէն»:

Յամի Տեառն 1832 Յուլիս 30:

Այս առթիւ կարեւոր կը համարեմ
 յայտնել, թէ Ս. Եղիա Եկեղեցիին շինու-
 թիւնը կատարող Տիկին Համասիւտի մա-
 կանունը 421րդ էջին մէջ սխալմամբ Մեր-
 կերեան գրուած է. մինչ Զէլէպեան է այն,
 ինչպէս վերոյգրեալ յիշատակարանը ցոյց
 կու տայ:

ՎԵՐՁ
 ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄՇԱՆ



61 Տարեցոյց Ս. Փրկչեան Պզգ. Հիւանդանոցին,
 տարի 1900, էջ 160:

**ԺԱՂՅԵՓՈՒՆՁ ԺԱՄԱՐԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆ
 ԿԵՆՏՐՈՆ**

1. Լեման-Հաուպտի ծննդեան 70ա-
 մեակը: — Իննսրբուկի Համալսարանի հին
 պատմութեան ուսուցչապետը C. F. Leh-
 mann-Haupt տօնեց իւր ծննդեան 70ամեակը:
 Յորելեարը գիտական աշխարհի մէջ հոյա-
 կապ հանդիսացած է Առաջակողմեան
 Ասիայի, մասնաւորապէս Ասորա-քաղղէա-
 կան պատմութեան ուսումնասիրութեամբ:
 Երկար տարիներ կատարած է հետազոտու-
 թիւններ Վանի եւ ամբողջ Հայաստանի մէջ:
 Իր բազմաթիւ աշխատութիւններէն նշանա-
 ւորագոյններն են «Հայաստան երբեմն եւ
 այժմ» (Armenien einst und jetzt), երկու-
 ընդարձակ հատորներով, եւ Ուրարտեան ար-
 ձանագրութիւններու լիակատար հաւաքա-
 ծոյքը, որ նոր սկսած է լոյս տեսնել:

«Հանդէս Ամսօրեայ» ի խմբագրութիւնը
 փութաց խառնել իւր ուրախական ձայները
 Յորելեարի համակիրներու ուրախութեան:

2. Հայագիտութեան Ընկերութեան (So-
 ciété des Etudes arméniennes) ժողովը:
 Փետրուար 20ին ունեցաւ Հայագիտութեան
 Ընկերութիւնն ի Պարիս իւր տարեկան ժո-
 դովը: Ժողովը քննեց Ընկերութեան Ելե-
 մտից հաշիւը, որ ներկայացուց տխուր
 պատկեր մը: Revue des Etudes arméniennes-
 անցեալ տարուան առաջին համարի տպա-
 գրութեան ծախքը դեռ բաց ունի 2000
 Փրանք. այս պատճառաւ ալ հնարաւոր չէ
 եղած հրատարակել երկրորդ համարը: Եստ
 ցաւալի է այս երեւոյթը, որովհետեւ Հայա-
 գիտական Ընկերութիւնը իւր գոյութեան
 տասը տարիներու մէջ բարգաւաճեց ի
 նպաստ հայագիտութեան այնպիսի արդիւնա-
 ւոր գործունէութիւն մը, մասնաւորապէս
 Ուսուցչապետ A. Meillet եւ Frédéric Maclerի
 ջանքերով, որ արժանի էր ամէն քաջալերու-
 թեան: Կը մտադրենք Ընկերութեան կորով եւ
 յարատեւութիւն: — Ժողովին մէջ կարգաց
 Դոկտ. Վ. Թորգոմեան բանաստեղծութիւն մը
 Ամիրխանեան հայ վաճառականի մէկ նա-
 մակի մասին: Ամիրխանեան Հնդկաստանի
 մէջ տէր կ'ըլլայ ահադին հարստութեան
 մը, զոր կ'ուզէր դնել Ներսէս Ե. Աշտարա-
 կեցոյ տրամադրութեան տակ, անկախ
 Հայաստան մը ստեղծելու համար: Ժամա-
 նակի ինչ ինչ հանգամանքներ արգելք կ'ըլ-
 լան այս ծրագրին իրագործման: Եւ մինչ
 Ամիրխանեան իւր հարստութիւնը բարձած
 նաւի մէջ անձամբ Հայաստան ուղեւորիլ
 կ'ուզէր, նաւարեկութիւն մը վերջ կ'ուտայ
 իր կեանքին ալ, հարստութեան ալ: —
 Հ. Պէրպէրեան քննադատեց Եգնիկի վերջին
 հրատարակութիւնը, լոյս տեսած Ս. Ղա-
 զարի տպարանէն, ուր նկատի չէին առնուած
 էջմիածնի նորագիւտ ձեռագրին համեմա-

տութիւնները: Այս առթիւ շեշտեց Ա. Մէյէ
 Եգնիկի «Ընդդէմ Աղանդոց» մատենին քննա-
 կան նոր հրատարակութեան անհրաժեշտու-
 թիւնը՝ բնագրով, թարգմանութեամբ եւ
 մեկնութեամբ. առ այս հրաւիրեց Mariésի
 ուշադրութիւնը, զոր ներկայացուց իրրեւ
 ամէնէն ընդունակը այսպիսի աշխատու-
 թեան մը:

3. Հայագիտութիւնը Պրագի Համալսա-
 րանին մէջ: — Չեխական կառավարութիւնը
 մասնաւոր կարեւորութիւն տալով հայ լե-
 զուի ուսմանց, հրաւիրած է Դոկտ. Ն. Մար-
 տիրոսեանը դասախօսելու հայերէն լեզուն
 Պրագի շեխական Համալսարանին մէջ: Առ
 այժմ չարթնր երկու դասախօսութիւն տեղի
 կ'ունենայ. յոյս կայ թէ առաջիկային պիտի
 աճի դասախօսութիւններու թիւը:

4. Օրիորդ Սիրարփի Տէր-Ներսէսեան
 դասախօս Գեղարուեստի Պատմութեան: —
 Սորբոնի Համալսարանի մէջ կը դասախօսէ
 Գեղարուեստի Պատմութեան, յատկապէս
 բիւզանդական եւ հայկական մանրանկար-
 շութեան վրայ Օր. Ս. Տէր-Ներսէսեան:
 Յունուար 15ին առանձին հրաւերով Welles-
 ley Collegի մեկնած է գեղարուեստի պատ-
 միչ Օրիորդը Միացեալ Նահանգները՝ դա-
 սախօսելու բիւզանդական եւ հայկական
 մանրանկարչութեան վրայ: Ամերիկա մեկ-
 նելէն յառաջ՝ Յունուար 12ին բանաստեղծ
 է Օրիորդը Նուպարեան Մատենադարանի
 մէջ ի Պարիս էջմիածնի Աւետարանին նկար-
 ներուն վրայ, երբ ուշագրութիւն հրաւիրած
 է յատկապէս բնագրին մէջ գտնուած ման-
 րանկարներու վրայ, որոնք ոչ թէ ասորա-
 կան-միջագետային ծագումէ են, ինչպէս
 J. Strzygowski տրամադիր էր ընդունիլ, այլ
 մանրանկարուած են հայ նկարչէ, Աւետա-
 րանի գրչութեանէն ետքը:

5. Էտկար Շահին: — Հայ տաղանդաւոր
 նկարիչ էտկար Շահին անուանուած է ան-
 դամ Գաղղկայի Société Nationale des Beaux
 Artsի վարիչ մարմնին: Հաղուողէս պատիւ
 մըն է այս, ուրուն կ'արժանանայ հայ գե-
 ղարուեստասէրներու մէջէն առաջին անգամ
 է. Շահին:

6. Զատիկի Խանգատեան: — Հայ քար-
 տէսագիրն Զ. Պանդատեան, որ վերջերս
 հրատարակած էր Ալթէրի պատմական քար-
 տեսները, պատուուած է Տունիսի Պէյէն
 «Իֆթիխար» պատուանշանով ի նշան գնա-
 հատութեան իր քարտիսագրական աշխատու-
 թեանց:

7. Նկարչուհի Տիկին Թագուհի Բեռ-
 Ջօրեան: — Անցեալ Գեղտեմբերին ի ժընէվ
 ցուցահանդէսի դրաւ Տիկին Թագուհի Զօ-
 րեան, Ռոստոմի դուստրը, նկարներու նոր
 շարք մը: Յուցահանդէսի սրահները կը ներ-

կայացնէին Հայուհւոյն բազմազան եւ բազ-
 մարուեստ ստեղծագործութիւնները կտաւի
 վրայ: Ինչպէս ուրիշ անգամներ, նաեւ այս
 ցուցահանդէսը խից արուեստագէտներու
 հիացումը: Ինքնուրոյն է Ջօրեանի արու-
 եստը, բնական, խօսուն արտայայտութեամբ
 իր նկարները: Արուեստաւորը հաւատարիմ
 հայրենի աւանդութիւններուն՝ սնած է ար-
 րեւելեան ճաշակով. իր տոհմին սեպհականը
 կը ձգտի վարպետորէն ձուլել միացնել եւրո-
 պականին՝ ստեղծելու համար նոր մը, որ
 չէ արեւելեան, բայց կը ցոլացնէ արեւե-
 լեանը, չէ եւրոպական, բայց կը գոհացնէ
 եւրոպական ճաշակը: Նկարներու մէկ մասը
 Յիսուսի կեանքէն պատկերներ կը ներ-
 կայացնեն, ուրիշներ՝ նոյնպէս աւետարանի
 ներշնչմամբ «Պաշի ճանապարհը», «Պետ-
 րոսի եւ Անդրէասի կոչումը» են, կան նաեւ
 բնութեան պատկերներ, ազգային սովորու-
 թիւններ («Պաղոզօրհնէք») եւ այլն: Մանա-
 ւանդ նուիրական նկարներու մէջ կը խօսի
 արուեստաւորի հոգին, որ տողորուած է
 քրիստոնէական ներշնչմամբ եւ խորհրդա-
 ւորութիւն մը կը զգեցնէ անշունչ կտաւին,
 անձայն քարոզելու անցաւորներուն՝ հոգե-
 կան աշխարհէն: Զուցեբրական թերթերը
 սուին արձագանգը այն բարձր գնահատու-
 թեան, որուն արժանացաւ Տիկին Զօրեանի
 արուեստը գեղարուեստասէր աշխարհէն:

8. Հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկե-
 րակցութիւն: — Բուկարեստի մէջ կազմուած
 է Հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերակ-
 ցութիւն մը. որուն նպատակն է հաւաքել հայ
 քաղաքակրթութեան պատմութեան համար
 նիւթեր, ուսումնասիրել զանոնք եւ ծանօ-
 թացնել մեծ աշխարհին: Պիտի հիմնուի Հայ-
 կական Թանգարան մը: Ընկերակցութեանս
 նախաձեռնութեամբ ստեղծուած է նաեւ
 «Հայ-ուսմէն բարեկամութեան եւ ուսում-
 ներու շրջանակ» մը, նախագահութեամբ Ու-
 սուցչապետ Եորգայի եւ բացուած է «Հայ
 ուսումներու լսարան»: Կը մտադրենք ամէն
 յայտնութիւն այս ազգօգուտ ձեռնարկու-
 թիւններուն:

9. Պարսկական արուեստի ցուցահան-
 դէսը: — Յունուար 7-Փետր. 28 բացուե-
 ցաւ Լոնտոն Պարսկական արուեստի ցուցա-
 հանդէսը, որ կը ներկայացնէր առարկաներ
 Աքամենեան շրջանէն մինչեւ մեր օրերը:
 Որովհետեւ հայ արուեստն ալ ունէր սերտ
 աղբիւր Պարսկականին հետ, ցուցադրուած
 էին նաեւ հայկական ծագումով իրեր: Ոստ-
 տացուած է այս առթիւ լոյս բնծայել եռա-
 հատոր աշխատութիւն մը, որ պիտի ընդգրկէ
 ցուցադրուած առարկաներէն կարեւորները,
 յատուկ ուսումնասիրութեամբ:

